


Գրական Թերթ

ISSN 1829-1627

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ * ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 1932-ԻՑ

Տղազրվում է ՀՀ Մեակույթի նախարարության աջակցությամբ

www.grakantert.am



Սամվել ԽԱԼԱԹՅԱՆ

Մտքերի, գագամունքների, ցավի իրարամերժ քառուսում, երբ հարցականներն սկսում են բացականչականներ դառնալ, երբ ի պատասխան դրա փորձում են կախման կետերը ժողովրդի համար կրկին ականջի օղ դարձնել՝ վրա է հասնում ցասման ժամը: Ոչ միայն թշնամու դեմ, որին պարտվեցինք, այլև պարտության անարգալից տրվելու մեղավորների դեմ, որոնց մեղքով հազարավոր զոհեր

ունեցանք, անհայտ կորածներ, հաշմվածներ, որ կարող էինք չունենալ, հայրենիքի մեծ տարածք հանձնեցինք թշնամուն, որ կարող էինք այդ վիճակին չհասցնել, անդառնալիորեն կորցրեցինք ազգային մշակույթի հարյուրավոր արժեքներ, բնակավայրեր, հավատ, հույս... Ովքեր են մեղավորները: Մենք՝ բոլորս: Հորթի հրճվածքով մեր

Մեր պարտությունը և որ չէր սկսվել...

«դըմբ-դըմբ-հու-հան», մեր ազգային արժեքները պահպանելու, բայց պաշտպան չկանգնելու դնջությունը, ազգային ոգու ընդդիմության բթացումը, մեր խեղճությունը, մեր միամիտ հավատը, որ եթե Նիկոլը սատանայի դեմ է պայքար սկսել, ուրեմն փրկիչ է: Այնինչ սաղայելին փոխարինեցինք դիվապետով:

Մեր պարտությունը նոր չէր սկսվել, պատերազմն ու դրա ողբերգական ավարտը պարտությունների կովմինացիան ու հանգուցալուծումն են: Սկսվել էր, երբ հանրությունը թեթև ձեռքով ու հայիոյախոս լեզվով բաժանեցինք «սևերի» և «սպիտակների», երբ սասանեցինք իրավական համակարգի հիմքերը, երբ երկիրը թալանածներին ոչ թե արդարադատության ատյաններում տեսանք, այլ ամեն օր նրանց բռնել-բաց թողնելու սերիալներում, երբ պրոֆեսիոնալ կադրերը փոխարինվեցին անփորձ, կասկածելի կրթություն և դաստիարակություն ունեցողներով ու սորոսականներով, երբ խաղատախտակին շարտվեցին դպրոցներում ռազմագիտություն, հայ ժողովրդի պատմություն, լեզու և գրականություն, եկեղեցու պատմություն դասավանդելու նոր մեթոդները, երբ այլասերությունները պետական քարոզչությամբ առաջադիմություն ու քաղաքակիրթ անվանվեցին և օրենքների նախագծեր գրվեցին՝ դրանք օրինականացնելու համար: Եվ այդ ամենը՝ ներծծված ատելության շրջով, պատերին հատ-հատ ծեփելու, ասֆալտին փռելու հաթաթաներով ու իրականացումներով:

Մի պահ ձեզ թափ տվեք և երրորդ դիտակետից նայեք. մի երկիր, որը շուրջ 30 տարի թալանվել է, այդուհետ գունավոր հեղափոխությամբ իշխանության եկածների թեթև խելք ու ձեռքով առաջացել են հակընդդեմ բևեռացումներ և ատելության մթնոլորտ, անձնական թշնամանքով առաջնորդվող գործիչներ, խուժանության աստիճանի հասած զգվտություններ, ընդդիմություն կոչումն ունեցող, բայց դրան չկոչված շահամուլներ, մարաղ մտած, բայց աչքներն էլի պատառ փախցնելուն գցած օլիգարխներ, այդ երկիրը կարո՞ղ է բարձրակարգ դիվանագիտություն ունենալ, բանակ զորեղացնել: Շարունակեք, շարունակեք նայել մեր **հպարտորեն** անցած ճանապարհին. ժողովրդի աչքին կապույտ վարագույր ծածանելով հեղափոխական ալիքի պատրանք ստեղծածները, վարագույրի ետևում, կաշառքատու օլիգարխների և իրենց արտասահմանյան հայրերի հետ առևտուր սկսելու համար նորանուն հիմնադրամներ ստեղծեցին, որոնց գործունեությունն այդպես էլ յոթ փականքի տակ է պահվում, երկրի բյուջեից իրենք իրենց ահռելի գումարներով պարզևատրեցին, սառեցրին հարաբերությունները բարեկամ հզորների հետ՝ նոր բարեկամներ չունենալով, իսկ երբ պատերազմի շունչն արդեն զգացվում էր, ստալինյան

Շարունակությունը՝ էջ 2

Շատ են մեր մեղքերը, թե քիչ, միայն ԱՍՏՎԱԾ կարող է հաշվել: Դրանցից որոնք են վճռորոշ մեր կյանքում, դա էլ դժվար է հասկանալ այս խառը, փնթի ժամանակներում: Բայց մեր մեղքերից մեկի համար է, որ շատ են ուզում աղոթել մեր ՏԵՐ ԱՍՏՈՒՆ: Դա վախն է: Մեզանից հեռացրո՞ւ վախը, ՏԵՐՄ: Վախն է, որ ամենուրեք սողոսկել է և հատկապես այնտեղ, որտեղ ճշմարտության հոտն է առել: Ճշմարտախոսները վախեցել են, որ կնեղացնեն իրենց սիրելիին, իրենց վստահված անձին, իրենցից այն մեկին, ում վրա դրել են ազգի հոգսերը: Վախեցել ենք, երբ մեզ լսել են, վախեցել ենք, երբ չեն լսել: Վախն է նաև ամբարտավաններին առաջ մղող ուժը: Նրանք վախենում են ճշմարտությունից և փորձում են ամենուրեք ի ցույց դնել ճշմարտությունը, որը շատ դաժան է:



Ալիս ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մինչդեռ պետք է ճշմարտությունը խոհեմաբար թաքցնել այնտեղ, որտեղ նրան վտանգ է սպառնում և ի ցույց դնել, երբ նրա առջև մաքրված են բոլոր ճանապարհները:

Վախն է հիմա թագավորում մեզանում: Պարտվել ենք, բայց ո՞վ է մեզանից պահանջում ի լուր աշխարհի հայտարարել, պատմել, թե ինչո՞ւ, ինչպե՞ս, որտե՞ղ ենք պարտվել: Կարծես թե արդեն ավարտել ենք մեր բոլոր պատերազմները և այլևս կորցնելու ոչինչ չունենք: Թող թշնամին էլ, բոլորն էլ իմանան մեր բոլոր թուլությունները: Ի՞նչ տարբերությոն:

Մինչև այժմ թշնամու կորուստների մասին աշխարհը չգիտի: Բայց չէ՞ որ ամեն օր տանկեր, ինքնաթիռներ, ԱԹՍ-ներ էր, որ ոչնչացնում էինք, հաղորդում էինք թշնամու տված զոհերի քանակը: Պարտվելուց հետո առավել քան գաղտնապահ պետք է լինեինք, եթե ուզում ենք, որ այսուհետև չպարտվենք: Մենք ոչ թե մեզ ենք ներկայացնում մեր թուլությունները, թույլ կետերը, մեր դավաճաններին, այլ նախ և առաջ՝ թշնամուն: Աշխարհին պատմում ենք, թե ինչ պետք է անենք, որ ուժեղանա մեր երկրի ռազմական մեքենան: Իսկ այդ ընթացքում մեր թշնամին, ծաղրը շուրթերին, ինքն է ուժեղանում և որոշում մեր փոխարեն: Այսքան բացբերան ա՞զգ: Եվ ո՞ւմ ենք ուզում զարմացնել մեր ճշմարտախոսությամբ: Այս պոռոտախոս ճշմարտախոսությունն այսօր սանձելու ոչ մի լծակ չկա: Մեր պետանվտանգությունը դեռ խորը նինջի մեջ է: Վախը նրան էլ է պատել. քնելը, ամեն ինչից անտեղյակ լինելը փրկություն է նրա համար՝ «քանի դեռ չի եկել իսկական վախճանը, դեռ կարելի է ապրել» սկզբունքով:

ՎԱՊԵՐ...

Մեկը մյուսի ետևից նախարարներ են փոխվում: Ոչ ոք չգիտի, թե նորերը հներից ինչո՞վ են առավել: Հազիվ ազատվեցինք ԿԳՄՍ նախարարից, բայց չգիտենք, թե այս մեկը ինչո՞վ է նախընտրելի նախորդից: Եվ ինչո՞ւ է շարունակվելու այս չորս հույժ կարևոր նախարարությունների՝ նույն կաթսայում եփվելու և այդպես էլ հում մսալու գործընթացը: Խոսում ենք գիտության կարևորության մասին, բայց ուշքի չենք գալիս, որ սպորտն ու գիտությունը միմյանց եթե ոչ տրամագծորեն հակադիր, ապա գոնե միմյանցից շատ հեռու ասպարեզներ են: Այս չորսից յուրաքանչյուրն իր լավագույն մասնագետների, նվիրյալների, քուրմերի կարիքն ունի:

Վախենում ենք սխալվելուց ու ավելի ենք սխալվում: Ո՞ր են նոր, համարձակ քայլերը: Վախենում ենք լավագույն մասնագետներ որոնելուց, վախենում ենք նաև գտնելուց, վախենում ենք կորցնելուց: Իսկ ոչնչից չվախեցողները վախենում են բոլոր բնագավառներում հանկարծ իրենցից լավերին տեսնելուց: Այդ ե՞րբ է եղել, որ միջակությունները հանդուրժեն ուժեղներին: Այդպես էր մինչև պատերազմը: Բոլոր ասպարեզները գերբեռնված էին միջակություններով, որոնք զբաղված էին նվիրյալներին հեռու վանելով: Մինչդեռ հեղափոխությունից հետո պետք է իշխանությունը նվիրյալներին պատկաներ: Նրանց, ում համար նշանակություն չունենային աշխատավարձի, պարգևավճարի, անձնական բարեկեցության խնդիրները: Հիմա մեզ նվիրյալների հասարակություն է պետք: Որ արժանի լինենք մեր նվիրյալ զինվորների ու զինվորականների գործած սխրանքին: Միջակությունները չպետք է տեղ ունենան ղեկավար պաշտոններում, քանի որ նրանք միշտ վախենալու են իրական արժեքներից:

Վախենում ենք դավաճաններից: Յուրաքանչյուրի մեջ դավաճան որոնելը նույնպես քաղաքականություն է: Մարդկանց, առանց այն էլ բազում կորուստների ցավի մեջ շփոթ, սուկահար հասարակության մեջ ավելի մեծ շփոթություն առաջացնելու ամենալավ ձևերից մեկը... Սա էլ է դավաճան, նա էլ է դավաճան, սա լրտես է, նա գործակալ է... Այս կերպ մենք չենք կարող լսել առողջ տրամաբանության ձայնը, եթե նույնիսկ այն հզոր թմբուկներով ու շեփորներով անցնի մեր փողոցով:

Բայց նաև իրողություն է, որ մեր այս շփոթ, սուկահար հասարակության մեջ կան մարդիկ, որոնք չեն վախենում ապագայից... Ու նրանց թիվը քիչ չէ: Նրանց, ում համար լավատեսությունը նոր հորիզոն է, իրատեսությունը՝ առազաստ, գործունեությունը՝ խարխալ:

Հեռացրո՞ւ մեզանից վախը, ՏԵՐՄ, հասցրո՞ւ մեզ բաղձալի հանգրվանին, որտեղ մենք նորից միասնական կլինենք, չենք հոշոտի մեկմեկու, կլինենք ճշմարիտի առաքելությամբ ճշմարիտ ազգ:



Հրանտ ԱՎԱԿՅԱՆ

Ցեղասպանություն ապրած ժողովուրդը հարկ է իմանա՝ այսօրվա աշխարհը առանձնապես չի փոխվել, ավաղ, թուրքը մնում է նույն թուրքը:

Հայն էլ նույն միամիտ հայն է, որին չգիտես ինչու այլազգիները խորամանկ են կոչում: Ռուսն էլ նույնն է, նա իր պատմությունը չի մոռանում, եթե թուրքը Օսմանյան կայսրությունն է հիշում, նա էլ՝ Ռուսականը: Սա է ճշգրիտ ռազմաքաղաքական ժամացույցը և մեր ժամը, ապագան դուրս չէ դրանից:

Հայերը, ինչպես և որոշ ժողովուրդներ, չեն սիրում լսել դառը ճշմարտությունը, նրանց գայթակղում են գեղեցիկ սուտը, դյուբիջ առասպելը և բարի ավարտով հեքիաթը:

Արդյո՞ք մենք մեզ ճանաչում ենք այնքան, որքան մեր թշնամիները:

Արդյո՞ք մեր թշնամիներին ճանաչում ենք այնքան, որքան իրենք իրենց:

Հավատա՞նք, որ հայի վերջին խելքը գիջում է ուրիշի սկզբի խելքին:

Հավատա՞նք, որ մենք աշխարհի կոչվածի վերաբերմունքից հուսահատվում ենք անընդհատ, քանզի ապրում ենք սին հոյսերով, իսկ աշխարհը՝ պարզ իրականությամբ:

Ասվում է՝ դիվանագիտությունը հնարովի արվեստ է, արվեստի հնարավորություններն էլ՝ անսահման:

Ավաղ, մեզանում երբեմն բախտորոշ դիվանագիտությամբ զբաղվում են արվեստագետները՝ շփոթելով արվեստն ու դիվանագիտությունը: Պարզվում է՝ դիվանագիտությունը իսկապես գիտություն է:

Իշխանությունները երբ վախենան ժողովրդին ժամանակին ասել ճշմարտությունը, կգրանցվի իրենց և ժողովրդի պարտությունը:

Պարտությունը հաղթահարելու ճանապարհը՝ ճանաչել թշնամու նենգության, բարեկամի սիրո սահմանները և, ամենակարևորը, ինչպես ասվել է մարդկանց համար, այդպես էլ ժողովրդի՝ ճանաչենք ինքներս մեզ:

Ժողովուրդները լարի վրայով քայլող լարախաղացի են նման, մե՛կ կարող է ընկնեն ամբոխավարության վիհը, մե՛կ թռչեն ազգ կոչվելու երկինք:

Երանի պետությունները մարդկանց պես սիրեն իրար: Նրանք հարաբերվում են քարտեզի վրա ունեցած տարածքի, բյուջեի, զինանոցի հզորության և խմբակային ռազմաքաղաքական ուժի չափով: Մարդկային որևէ հուզականություն հատուկ չէ նրանց:

Ցավալի է խոստովանել՝ մեր պետության խորհրդարանական կառավարությունը պարտվեց ավտորիտար, գիշատիչ լծակներ և ժամանակակից նոր տեխնիկական զինանոց օգտագործող երկու պետությունների:

Մեզանում մեկը մյուսին հավասարակշռող պետական ուժերն իրար ջլատեցին, հիմնականում բավարարվեցին իրենց թույլ իշխանությամբ: Պատերազմի եզրին գտնվող պետությունը իրեն պահեց չարածնի մանուկի պես՝ գլխավոր հրամանատարն իր վրա վերցրեց պարտության ողջ պատասխանատվությունը, մյուս պատասխանատուներն էլ պիտի խոստովանեն իրենց մեղքերը և այդ չափով խիզախեն որոշելու իրենց ապագան:

Պարադոքս է, այս դառը պատմության մեջ մեր կողմից միակ հաղթողը մեր զինվորն է, ոչ՝ բանակը, հաղթականը զինվորի ոգին էր, ոչ՝ ռազմական մարտավարությունը: Տե՛ր, ողորմյա մեր զուհերին, փառք ընկածներին և ներկա ու ապագա մեր բանակին:

Ռուզան ԱՍՏԻՅԱՆ



Հուսահատությունը մեզ չի փրկի, բաց արեք ձեր միտքն ու հոգին, 420 հազար քառակուսի կիլոմետր տարածք կորցնելուց հետո հայը պետք է վերանար երկրի երեսից, բայց նա ապրում է և շարունակելու է ապրել: Մեր ընդհանրական ազգային անպատասխանատվության արդյունքում կանգնեցինք հերթական կորստի առաջ: Բանակը զինելու փոխարեն ի՞նչ արեցին երկրի պատասխանատու այրերը, օր ու մեջ թշնամու դիպուկահարները մի երիտասարդի դիակ էին ուղարկում մեզ սթափեցնելու համար, բայց ո՞վ էր մտածում այդ մասին, կարծես աշխարհի վերջն էր, անձնական հարստություն էին միայն կուտակում... ՄԵՆՔ ՊԱՐՏԱԴՐՎԱԾ ԵՆՔ դուրս գալու 44-օրյա ազգակործան աղետի ջլատումներից: Այո՛, անսպասելի էր այն ամենը, ինչ կատարվեց հայոց ազգի հետ, արթնացե՛ք ցավի, կորուստների, դավաճանությունների, մանկամիտ բերանբացությունների, հայրենասիրության կոչերի տակ աթոռներ որոնողների, ազգի ողնաշարը ջարդել փորձողների, երեսուն արծաթով ծախվածների, լրատվական լաց ու կոծերի, ազգային արժանապատվությունը գետնով տվողների տհաճ մրցավազքից ու հուսահատ թմբիրից, որ ազգովի վերականգնենք և համախմբենք մեր ուժերը՝ նոր դիմադրությունների, զոհվածների, անհետ կորածների, հաշմանդամների մայրերին ու նոր սերնդին պարտվողականության անելանելիության մեջ չթողնելու վճռականությամբ: Պատերազմը ավեր է, նախապատրաստվել է պետք ամեն օր,

ԱՐԹՆԱՅԵՔ ԿՈՐԱՏԻ ԹՄԲԻՐԻՑ, ՎԱՂՆ ՈՒՇ Է ԼԻՆԵԼՈՒ...

բանակից գողանալն ու սեփական դրյակներ հյուսելը ազգի այսօրվա պարտությունն է... Ազգը քանի՞ անգամ կարող է գենոցիդի ենթարկվել ու մնալ անհաղորդ իր պաշտպանությանը, էլ ի՞նչ լեզվով ասեմ, հայոց ազգ... Առաջնորդներդ էլ պիտի ազգային մտածողության հզորներ լինեն, ոչ թե գերտերությունների կամակատարներ, արժեք է ՀԱՅՐԵՆԻՔԸ, այդ զգացողության տերերն ընկան մարտի դաշտում հաղթանակ տանողի կամքով ու հպարտությամբ, մտածելով, որ հայրենիքը պաշտպանում են արյունով, իսկ արյան դոնորներն անկազմակերպ ու անմիաբան էին... Ի՞նչևէ, մեր հոգևոր անհուսությունը մեր մահն է, մի՛ վերադարձրեք 1915 թվականի ազգովի մեռնելու հոգեբանությունը, թշնամին հենց դրան է ձգտում իր լրտեսների միջոցով, որոնք վխտում են մեր շուրջը լուրը... Սթափվենք, նոր սխալներ չգործենք, մեր առջև գերտերությունների հզոր բանակներ են կանգնած իրենց պետությունների ապագա շահերի համար, վտանգը որսի է ելել մեր դեմ, մեր շատ կարևոր տարածքի դեմ, թուրքը Իզդիրը լցրել է զորքով, աչքներդ բաց արեք, Սևրի պայմանագիրն է առջևում՝ թուրքական պետության մահը, թշնամին չի քնում, իսկ դուք այս ի՞նչ եք անում: Այս պատերազմում պարտվեցինք բոլորս ու թե հաղթանակ տանեինք, բոլորով էինք տանելու: Համախմբվելու փոխարեն այս ի՞նչ ներքին ատելություն է, ո՞ր է գիտակից հայը, ո՞վ է մեր փրկության երաշխավորը, ոչ ոք թուրքի ճանապարհը չփակեց... Այս գինադադարը մեզ վերականգնվելու հնարավորություն է տալիս, ոչ թե թիկունքն էլ պարտության մատնելու: Ավերակների վրա ինչպե՞ս եք թագավորելու, գահի՞ մուրացկաններ, արթնացեք, խելքի բերեք երկիրը, ու թե բան կլինի բաժանելու՝ նոր սերնդին ապրելու ճար արեք, հետո կբաժանեք: Աշխարհը ոչ մեկին չի մնացել ու չի մնալու:

Մեր պատմությունը... Իրական մեջ

Մեր պատմության մեջ մեծ դեր է խաղում ժողովուրդի կողմնակցությունը: Ես հավատում եմ, որ այս ամենը ծրագրավորված էր և չեմ բացառում Թուրքիայի քողարկված մասնակցությունն այդ ծրագրին: Բայց և չեմ պնդում, որ դուք էլ հավատաք: Եվ գիտե՞ք ինչու: Մի բարակ, շատ բարակ հույսի թելով դեռ կախված եմ այն մտքից, որ սխալվում եմ... Այլապես, եթե, իրոք, ի վերուստ այս ամենը ծրագրված էր, ինչպես պնդում են ոմանք, ապա դժվար թե դա կհաստատու ծրագիր լինի, և երկրորդ փուլում խաղարկվելու է հայոց պետականության լինելը: Չլինելու սցենարը, այն, ինչը մեր դարավոր թշնամու նկրտումն է:

Նույնիսկ վարելու իրենց «կարողությամբ», նրանք կարող են իրականացնել երկրի առջև ծառայած հիրավի բարդ և ահեղ խնդիրները: Բայց պնդե՛րեսաբար դեռ կառչած են աթոռներից, որովհետև վախենում են դատաստանից: Միմիայն այդ պատճառով: Նրանք քողարկում են իրենց վախը նոր մանիպուլյացիաներ անելով: Սկզբում փորձեցին պարտության ամբողջ մեղքը գցել նախկին իշխանությունների վրա, բայց երբ մի շարք դավաճանական ասեմ, թե՛ տհասության արդյունք հանդիսացած իրողություններ ի հայտ եկան, «մեղավորների» ցանկն սկսեցին ընդլայնել՝ բոլորը մեղավոր են, բացի ամոթալի պարտությանն օժանդակած և վավերացրած Նիկոլ Փաշինյանից ու իր թիմից: Մանիպուլյացիայի տիպիկ օրինակ է վարչապետի բստրած, պարզունակ «Ճանապարհային քարտեզը», որն ավելի շատ «Ինչ եմ ուզում դառնալ» ստեղծագործական շարադրություն է հիշեցնում:

Նույնիսկ ղեմ է կառավարող քաղաքական ուժին, պետք է որ ի հայտ գար չարատավորված, հայրենասեր, կարողունակ այն ընդդիմությունը, որին ժողովուրդն աներկբայորեն կվստահեր ու կգնար նրա ետևից: Սակայն, նոր գործիչների կողքին հայտնվել են նաև այն ուժերից, որոնց դառը հացը մի անգամ արդեն ճաշակել ենք... Մարդ աստծո, գոնե մի՛ երևացեք այդ հարթակում, մարդկանց մեջ մի՛ արթնացրեք թալանչիների կլանի, օլիգարխական մկրտություն ունեցողների ետ գալու երկյուղը: Ի վերջո, ուշ թե շուտ, իշխանափոխությունը նոր ընտրություններով է լինելու, իսկ ձեր շարքերում կան հատուկներ ազնվաբար անձինք, ովքեր, երբ ժամանակը գա, կարող են հավակնել ժողովրդի վստահության ջվեին:

- Բա, լավ, սրա վերջն ի՞նչ է լինելու,- ծառանում է ամեն օր ու ժամ հազարբերան տրվող հարցը: Անձամբ ես՝ չգիտեմ, թե վերջը ոնց է լինելու, բայց որ անհետաձգելի սկիզբը Նիկոլի և իր թիմի հեռանալն է՝ պահի հրամայականն է:



Նարինե ԱՐԳԱՐՅԱՆ

Ուսանողական տարիները տարբեր էին: Երբեմն՝ ահավոր ու անհույս: Երբեմն՝ ուղղակի անելանելի: Հարաբերականորեն հանգիստ 70-ականներին ծնվածներն անգամ չէինք կարող պատկերացնել, որ կապրեինք այնպիսի ժամանակներում, երբ մեզ օրական բաժին կհասներ 250 գրամ հաց: Դա 90-ականների երևանում չափափաս մարդուն տրվող օրաբաժինն էր:

Հացի համար ստիպված էինք լինում երկար հերթ կանգնել: Մեր ուսանողական հանրակացարանի առաջին հարկում պարետի սենյակի դիմաց, հատուկ տեղ էին հատկացրել, ուր բերում էին տաք մատնաքաշները: Ծառարանի աշխատակցուհի տիկին Ջինան հացը բաժանում էր չորս մասի: Մատնաքաշի մեկ քառորդ կտորը կշռում էր հիսուն գրամ, գուցե փոքր-ինչ ավելի: Տիկին Ջինան վերցնում էր իմ ձեռքի չորս կտորնը և հայացքը թաքցնելով՝ մեկուկես մատնաքաշ էր տալիս՝ երկու չափաբաժին ավելի:

- Երեխաներին,- ամեն անգամ շեշտում էր նա:

Երկրաշարժից հինգ տարի էր անցել, և այդ բոլոր տարիներին Հայաստանն ու Ադրբեջանը գտնվել էին պատերազմական իրավիճակում: Իմ ծննդավայր Բերդ քաղաքին վիճակվել էր հայտնվել կրակի գոտում: Ծնողներս այն երբեք չըբեցին: Հայրս, լինելով բժիշկ, շաբաթներով անհետանում էր հիվանդանոցում: Մեղը մյուսի ետևից նրանց մոտ էին բերում այնպիսի ծանր հիվանդների, որոնց միաժամանակ ստիպված էր լինում սպասարկել բժիշկների մի ամբողջ անձնակազմ՝ դիմաձևտուային վիրաբույժներից մինչև վնասվածքաբաններ: Մայրս ուսուցչուհի էր, ռուսաց լեզու և գրականություն էր դասավանդում վրանային թաղամասում, որտեղ տեղակայված էր երկրաշարժի հետևանքով ավերված դպրոցը:

Բերդը սկզբում չէր հասկանում, թե ինչ է պատերազմը: Մարդիկ ամեն պայթյունից հետո դուրս էին թափվում բակ՝ պարզելու, թե որտեղ է ընկել հերթական ռումբը, որ վազեին օգնության: Նրանք հիմարաբար հույս էին փայփայում, թե դա իրենց քաղաքն էր, և իրենք էին որոշելու՝ ինչպե՞ս շարժվել, ինչ անել և ո՞ւմ փրկվել: Բայց այն օրը, երբ պայթյունի ալիքը ոչնչացրեց մի ողջ ընտանիք, պատերազմը ցույց տվեց, որ քաղաքի տերն ինքն է:

Մարդիկ այդժամ հասկացան, թե ինչ է պատերազմը:

Պատերազմը նախասենյակներում թաքնվելն է, եթե ռմբակոծության ժամանակ չես հասցրել փախչել ապաստարան: Նախասենյակն անվտանգ է, որովհետև ամեն կողմից պաշտպանված է սենյակներով: Հարկավոր է ամուր փակել դռները, իսկ ապակե դռները՝ ծածկել ծածկոցներով, որ պայթյունի ժամանակ բեկորները չվնասեն մարդկանց: Շատ կարևոր է հատակին իջեցնել այն ամենը, ինչ ծանր է ու կտորվող: Այնուհետև հարկավոր է սողալով հետ քաշվել ջահի տակից, որ ընկնելիս չվնասի ոչ ոքի:

Պատերազմը դռների փրկարար որմնախորշերն են: Եթե ռումբն ընկել է տան վրա, հարկավոր է վազել դեպի դուռը, ինչպես անում են երկրաշարժի ժամանակ: Քանի որ, եթե ամեն ինչ փուլ գա, դռների որմնախորշերի մեջ ողջ մնալու հնարավորություն կա:

Պատերազմը թաղանթապատ լուսամուտներն են: Ապակիները կտորվել են ռմբակոծությունից, բայց ոչ ոք նորերը չի տեղադրում: Շրջափակված քաղաքում հնարավոր չէ ապակի ճարել և մի՞թե իմաստ ունի նորից տեղադրել, եթե դրանք փշրվելու են հաջորդ ռմբակոծության ժամանակ:

Պատերազմը խաթարված տոներն են: Այնպես էր ստացվել, որ անխնա ռմբակոծում էին հատկապես Ամանորին, Մարտի ութին, Մայիսի մեկին, երկուսին կամ իննին: Մայիսի երկուսին մեռելոցի օր էր: Այդ մասին սահմանի այն կողմում լավ էին հիշում: Հակառակորդի համար կրկնակի ուրախություն էր խաթարել տոնական ու հիշատակի օրերը:

Սակայն մարդիկ ինչ-որ կերպ փորձում էին ապրել՝ ամուսնանում էին, երեխաներ էին ունենում, նրանց դպրոց էին ուղարկում: Նրանք հավատում էին, որ եթե

պատերազմի հանդեպ վախով չլքվես, այն մի օր ինքն իրեն կանհետանա: Բայց պատերազմը վերջ չունեց, ո՛չ: Իր ծավալվելու հինգերորդ տարում պատերազմը սուկալի թեժացավ: Մայրս ու հայրս կրտսեր քույրերիս ու եղբորս պաշտպանելու համար ստիպված եղան նրանց տեղափոխել Երևան: Ոչ կարճ ժամանակով, սակայն հնարավոր դարձավ ճեղքել շրջափակումը, քանի որ հարևան Նոյեմբերյանի ու Կրասնոսելսկի շրջանները հայտնվել էին հրետանային խիստ ռմբակոծության տակ և կրակի մի մասն իրենց վրա էին վերցրել:

Երևան տանող ճանապարհը մի քանի օրով բացվեց: Այդ օրերին մարդիկ քաղաքից դուրս էին հանում իրենց երեխաներին, որովհետև պատերազմը հասել էր այնպիսի եռման կետի ու երկուստեք կատաղության աստիճանի, որ անհնարին էր ակնկալել մարդասիրական վերաբերմունք ո՛չ ծեղերի և ո՛չ երեխաների նկատմամբ: Ծանապարհներն այնուհետև փակվեցին: Կարծես թե ընդմիջտ: Մեծահասակները մնացին աշխարհից կտրված ու փախստականներով հեղեղված Բերդում:

Ես սարսափած մտածում էի, թե ինչ կանեի, եթե

ԼՈՒՍԻՆԵՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

դժբախտություն պատահեր ծնողներիս հետ: Ես ընդամենը տասնինը տարեկան էի: Ինչպե՞ս էի կարողանալու ոտքի հանել փոքրերին:

- Երեխաներին թողնում եմ քեզ վրա,- հրաժեշտի պահին ինձ ասաց մայրս:

Չգիտեմ՝ ինչ էր կատարվում նրա հոգում, երբ նա, մեզ հրաժեշտ տալով, ուղևորվեց Բերդ: Ես վախենում եմ պատկերացնել դա: Ես չեմ ուզում իմանալ դրա մասին:

Մենք ապրում էինք հանրակացարանում, ամեն սենյակում չորս աղջիկ: Ոչ մի տեղից ու ոչ մեկից հնարավոր չէր օգնություն սպասել: Քանի որ մեր ծնողները պատերազմի պատճառով կտրվել էին արտաքին աշխարհից, մեզ օգնել չէին կարողանում: Սակայն օգնության էին հասնում մեր համակուրսեցիները: Նրանք երբեմն տնից ծանրոցներ էին ստանում մեղր, տհալ, լավաշ, տնական պանիր: Իմ ընկերուհի Արմինեի հայրը բռունցքաչափ ընկույզ էր ուղարկում, որի կեղևը երկու մատի սեղմումով հեշտությամբ տրոհվում էր մասերի ու պարզում իր քաղցր ու ոսկեշող միջուկը: Արմինեն փշրում էր ընկույզը ձեռքերի մեջ ու կերակրում երեխաներին. կտորած ընկույզը թաթախում մեղրի մեջ, ապա փաթաթում լավաշի մեջ, ափն էլ շերեփածն պահում, որ հատակին չկաթեր...

Մեկուկես մատնաքաշը (մի հացն արժեք ուսանողական չորս կտորն) թողնում էինք փոքրիկներին: Մենք քնում էինք կողք կողքի իրար կիպ կպած բազմոցներին: Ոչ բողբոջում էինք, ոչ էլ մեղավոր փնտրում:

Գիշերները երեխաներին չարթնացնելու համար շշուկով էինք խոսում ճաշատեսակների բաղադրատոմսերի շուրջ և պարտակում մեր սովածությունը: Հատկապես հաջողություն ուներ եղեգնածորյան տարբերակով պատրաստվող գառան բաղադրատոմսը:

- Մինչ կանայք լավաշ էին թխում,- պատմում էր Օսանյայի ընկերուհին,- տղամարդիկ համեմունքներով պատում էին ամբողջական գառն ու այն լցոնում յարդով ու դմակի ճարպով: Հետո մի մեծ կաթաս էին իջեցնում վառվող թոնրի հատակը, որպեսզի հյուսը ծորար դրա մեջ: Գառը կախում էին կաթասի վրա, ամուր փակում էին թոնիրն ու գնում նարդի ու շախմատ խաղալու: Մսի եփվածությունը որոշվում էր նրա գրգռիչ, հագեցնող ու չտեսնված համեղ բույրից, որը, դուրս գալով թոնրից, թանձր ամպի պես կախվում էր բակում:

Մյուս աղջիկները շունչը պահած լսում էին և հարցախեղդ անում տղամարդկանց, օրինակ, թե ինչ համեմունքներով էին նրանք պատում գառան միսը կամ ինչքա՞ն երկար էին այն պատրաստում: Խելացի առաջարկներ էին անում:

- Եթե թարմ կարտոֆիլ զգես կաթասի մեջ, կիսացնի եփել ծորացող հյուսի մեջ: Որքա՞ն համեղ կլինի,- թուրք կուլ տալով ասում էր Կարինեն:

- Իհարկե,- բոլորս ախ էինք քաշում:

Մենք այնպես էինք խոսում ուտելիքի մասին, կարծես այն ուտում էինք:

Մեկ ամիս անց հաջողվեց գրավել այն բարձունքը, որտեղից գնդակոծում էին մեր քաղաքը: Մայրս ու հայրս եկան ամբած ու հոգնած վիճակում: Երեխաներին հավաքեցին: Առջևում ծմեռային քննաշրջանն էր, և հետո նրանք ինձ սպասում էին տանը: Պատերազմի մասին ոչ մի խոսակցություն չունեցանք: Երևանում արձակուրդն անցկացնելու վերաբերյալ՝ նույնպես: Ես պիտի մնայի իմ ծնողների տանը: Ինչ էլ որ լիներ:

Երբ կրտսեր քույրերս ու եղբայրս գնացին, մեր սենյակը շատ լուռ դարձավ: Նույնիսկ հացն անսպասելիորեն շատ թվաց: Մեկ ամսում մենք հետ վարժվեցինք ուտելուց: Ահա ինչու էլ գիշերներն ուտելիքի մասին չէինք խոսում:

Հաջորդ օրը քաղաքի կենտրոնական հատվածում ազդագրեր էին փակցված: Կամերային երաժշտության տանը ելույթ էր ունենալու հրաշք Լուսինե Զաքարյանը:

- Գնա՛նք,- առաջարկեցի աղջիկներին:

- Գնա՛նք,- խանդավառվեցին նրանք:

Կամերային երաժշտության տունը լեփ-լեցուն էր օտարերկրացիներով: Երևանում տեղի ունեցող համաժողովին մասնակցելու համար ամբողջ աշխարհից ժամանել էին ծագումով հայ գործարարներ: Փաստորեն, դա նրանց առաջին այցն էր պատմական հայրենիք: Նրանք սաստիկ վախեցել ու համրացել էին իրենց տեսածից: Մանկությունից նրանց պատմել էին Արարատ լեռան, հազարամյա մշակույթի, արևահամ ծիրանի ու ժանեկահյուս խաչքարերի մասին, սակայն ո՞վ իմանար, որ հայրենիքը հենց պատերազմն է՝ օրվա մեջ երկու ժամով միացվող էլեկտրականություն, անվերջ սառնամանիք, սով ու աղքատություն:

Համերգասրահում արտասովոր լռություն էր տիրում: Օտարերկրացիները համակված էին վշտալից լռությամբ, իսկ երևանցիները վերացած էին իրենց մռայլ առօրյայից: Թվում էր, ինչ-որ մեկը ձեռքի շարժումով հոսանքազրկել էր ներկաներին: Բայց հետո բեմ եկավ Լուսինեն՝ ողջունելով և շնորհակալություն հայտնելով համերգին ներկա գտնվողներին: Եվ իսկույն կեք երգեց:



Լուսինեն Ս. Էջմիածնում՝ Վեհաբանի առջև

Նա կատարում էր հայ հնագույն հոգևոր երաժշտություն, Մակար Եկմալյանի պատարագից «Սուրբ-սուրբը», Առնո Բաբաջանյանի «Վոկալիզը», Կոմիտասի երգերը: Նրա ձայնը օրհնություն էր սփռում, սփռվում էր ու բժշկում: Նրա ձայնը մեզ պատմում էր այն, ինչի մասին մենք վաղուց արդեն մոռացել էինք... հույսի ու սիրո: Եվ հանկարծ մի պահ մեր կարծրացած ու թմրած սրտերն արթնացան, սկսեցին շնչել ու լցվեցին ծիածանի լույսերով, կարծես թե բացվել էին ինչ-որ անձանոթ, փրկարար դարպասներ, և մենք անմիջապես տեսանք մի այլ, երջանիկ իրականություն:

Երևանցիներն արտասովոր էին: Լուսինեն տարիներ շարունակ ծանր հիվանդ էր, և նրա յուրաքանչյուր ելույթն իր համար անասելի դժվար էր: Իհարկե, օտարերկրացիներն այդ մասին չգիտեին: Ահա թե ինչու, երբ նա կատարում էր Ջուլիո Կաչչինիի «Ավել, Մարիան», մի պատվարժան տղամարդ մոտեցավ բեմին ու նրան խնդրեց նորից երգել:

Եվ Լուսինեն մեկ անգամ ևս կատարեց «Ավել, Մարիան»: Հետո կրկին: Եվ երկու անգամ էլ համերգասրահում տիրում էր երախտագիտությամբ և ակնածանքով լի լռություն:

Կամերային երաժշտության տնից մենք հեռանում էինք նորովի մարդացած: Ամեն մեկս՝ ներշնչված հույսով ու սեփական ամոքիչ ճշմարտությամբ:

Երկու ամիս անց Լուսինեն վախճանվեց:

Այդ համերգը ես կհիշեմ իմ ողջ կյանքի ընթացքում:

Ռուսերենից թարգմանեց Սերգեյ ՄԱՆՎԵԼՅԱՆԸ

«Վախը չորս ձեռքով (պարունություններ երաժշտության և երաժիշտների մասին)» ժողովածուից, կազմեց Լ. Յուսուպովան, Մոսկվա, 2016



**ՀԳՄ վարչությունը
շնորհավորում է բանաստեղծ,
մանկագիր, դրամատուրգ
ՍՈՒՐԵՆ
ՄՈՒՐԱԳՅԱՆԻՆ
ծննդյան 90-ամյակի առթիվ**

**«Գրական թերթը» միանում է
շնորհավորանքին**

կասեի՝ զարմանալու հատկությունը: Մարդը պետք է բոլոր տարիքներում չկորցնի զարմանալու, սիրելու արժանիքը, այլապես նա կդառնա անտարբեր ու չի կարող մանկան նման մաքուր, զարմացած, գեղեցիկ աչքերով նայել կյանքին, մարդկանց...

Աշխարհը, իմ պատկերացմամբ, կանգուն է չորս բարոյական սյուների վրա՝ սեր, աշխատանք, բարություն, հավատ: Խարիչվեց այդ սյուներից մեկը՝ արհավիրքն ու սոցիալական չարիքն անխոստափելի են: Գրողի, արվեստագետի առաքելությունն է՝ աշխարհից պակասեցնել չարը, անարդարությունը, զորավիգ լինել արդարությանը, բարությանը, գեղեցիկին, թեթևացնել մարդու հոգսերը, վառ պահել ժողովրդի հոգու հավատը: Կյանքում ավելի շատ սիրելու բան կա, քան՝ ատելու: Իզուր չէ Սարդյանն ասում՝ սերն անմահ է, ատելությունը մեռնում է ամեն վայրկյան:

Ես իմ երկար կյանքում շատ աշխարհներ եմ շրջել, կյանքի հարուստ փորձ եմ կուտակել, ականատես ու ականջալուր եղել հազարավոր ելույթների, հարյուրազարավոր մարդկանց հետ եմ շփվել, հաղորդակցվել: Այդ ամենը նպաստել է, օգնել ինձ՝ ստեղծելու իմ դավանանքը, փիլիսոփայությունը, թևավոր խոսքը, իմաստությունը, ապրելու, ձևավորելու իմ խորհուրդը, որոնք խրատների, պատգամի ձևով սփռված են իմ բանաստեղծություններում, հեքիաթներում, պիեսներում, պոեմներում, հոդվածներում:

Եթե ինձ հարցնեն՝ ո՞րն է մանկական գրողի կոչման առանձնահատկությունը, կասեի՝ զարմանալու հատկությունը, սիրելու արժանիքը, այլապես նա կդառնա անտարբեր ու չի կարող մանկան նման մաքուր, զարմացած, գեղեցիկ աչքերով նայել կյանքին, մարդկանց...

**ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՉԵՆ
ԾԵՐԱՆՈՒՄ**

Բանաստեղծները չեն ծերանում, Նրանք ապրում են ամենուրեք, Մե՛կ ծնվող մանկան հետ մանկանում, Մե՛կ սիրող շրթին դառնում սիրերգ: Նրանք ապրում են անպրոպի մեջ, Վաղորդյան ցողում, մթնշաղում, Մե՛կ հայտնվում են հրում անշեջ, Մե՛կ ծիածանի մեջ ծիծաղում: Մե՛կ դառնում են ցավ ու տառապանք, Մե՛կ վայելք, խինդի վճիտ աղբյուր, Դառնում են դարի խոր հառաչանք, Մե՛կ հավատի սյուն, պայքարի սուր: Նրանք վառվում են որպես կերոն, Մոլորվածներին ափ են հանում, Հանգչում են մեկեն ու երգելով... Բանաստեղծները չեն ծերանում:

**ԴՈՒ ՊԻՏԻ ԱՊՐԵՍ, ԻՄ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Հանուն քո բազում զոհվածների թանկ, Քո հերոսական, հարուստ պատմությամբ, Գալիք օրերի հավատով համակ՝ Դու պիտի ապրե՛ս, ի՛մ Հայաստան: Դո՛ւ, որ հաղթել ես Սարդարապատում Ու Ավարայրի լեգենդար մարտում, Տեսել Դեր-Ջորի դժոխքն անպատմում, Դու պիտի ապրե՛ս, ի՛մ Հայաստան: Փլատակներից դու պիտի հառնես Փյունիկ թռչունի մեծ հրաշքի պես, Աշխարհում հոգուր գանձերը փռես, Դու պիտի ապրե՛ս, ի՛մ Հայաստան: Դու երախտիքի խոսք ես ասելու Բարեկամներիդ բյուր, բազմալեզու, Եվ ի հեճուկս մահվան, թշնամու՝ Դու պիտի ապրե՛ս, ի՛մ Հայաստան: Կանցնի ծմբը, գարուն կգա նոր, Կինչի հայոց երգը դարավոր, Կծաղկի ծառը մեր ճղակոտոր, Դու պիտի՛ ապրես, ի՛մ Հայաստան: 1988 թ.

ՄԱՅՐԻԿԻ ՕՐՈՐԸ

Քնել են ծառերը, Մայրիկը արթուն է: Քնել են դաշտերը, Մայրիկը արթուն է: Քնել է թռչնակը, Մայրիկը արթուն է: Քնել է գետակը, Մայրիկը արթուն է: Քնել են բուրբուրը, Մեղմ ձայն է լսվում. Մայրիկը աշխարհին Օրոր է ասում:

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիքն իմ մայրիկն է, Իմ տունն է ու իմ հայրիկն է, Իմ փողոցն է, իմ դպրոցն է, Իմ բակն է, իմ ծաղկանոցն է: Իմ հայրենիքն իմ տատիկն է, Հեքիաթասաց իմ պապիկն է, Իմ արջուկն է, իմ ջութակն է, Իմ փայտե ձին, իմ թութակն է: Իմ հայրենիքն իմ սահնակն է, Իմ խաղընկեր ժիր Սահակն է, Երկինք հասնող բարդի ծառն է, Միշտ ձյունապատ Մասիս սարն է: Իմ հայրենիքն իմ Սևանն է, Ջվարթնոցն ու Երևանն է, Հեքիաթներն են Թումանյանի, Հրաշքները՝ Հայաստանի:

ՍԻՐՈՒ ՏԱՂԱՐԱՆ

Կնոջս՝ Մարոյին

Թե լեռը դու չես՝
Էլ ի՞նչ վեհություն,
Աղբյուրը դու չես՝
Էլ ի՞նչ մաքրություն,
Թե լույսը դու չես՝
Էլ ի՞նչ առավոտ,
Թե հոյսը դու չես՝
Ի՞նչ մորմոք, կարոտ:
Թե հարսը դու չես՝
Էլ ի՞նչ հարսանիք,
Թե սյունը դու չես՝
Ի՞նչ տուն ու տանիք:

ՏԱՐԻՆԵՐ

Տարիներ, ո՞ր եք սլանում, Մի քիչ կամաց գնացեք, Ձեր հետևից ես չեմ հասնում, Բեռս ծանր է, իմացեք: Արագավազ ձիեր թամբած՝ Դուք թռչում եք քարատրոփ, Ես ուղտի պես բեռնավորված, Ինչպե՞ս հասնեմ ձեզ արդյոք: Հեռու հեռվում լեռ կա հոյսի՝ Պիտի ելնեմ ես կատար, Իմ սրտի մեջ ծովեր լույսի՝ Բյուր երազներ անկատար: Ինչպե՞ս անցնեմ ես անտարբեր, Մի կին ձեռքով է անում, Օգնություն է հայցում մի ծեր Կյանքի անծայր օվկիանում: Թափորի մոտ պիտի մի պահ Գլխարկ հանեմ հարգանքով, Հարսանիքին ճանապարհ տամ Պատանեկան հրճվանքով: Տարիներ, ո՞ր եք սլանում, Մի քիչ կամաց գնացեք, Ձեր հետևից ես չեմ հասնում, Բեռս ծանր է, իմացեք:



Ավետիք Իսահակյան. «Չմշակված շատ սյուժեներ կան, գրիր, մշակիր: Մեր մանուկներին պետք է ծանոթացնել ժողովրդի գանձերին»:

Դերենիկ Դեմիրճյան. «Լավն է իր պարզությամբ, բնականությամբ ու անմիջականությամբ «Քարտաշի սերը» բանաստեղծությունը: Անձնականի և հասարակականի օրգանական ծուլման գեղեցիկ օրինակ»:

Վախթանգ Անանյան. «Զգիտեմ ինչու, երբ կարդում եմ Սուրեն Մուրադյանի համով-հոտով գրած բանաստեղծությունները, կարոտում եմ իմ անցած-գնացած մանկությանը, մեր ծաղկոտ սարերը, ամպերի մեջ ծվարած լեռներն ու քարոտ կածանները: Մարդկանց մասին է գրում Սուրեն Մուրադյանը, քաջության, անձնվիրության, ազնվության, ընկերասիրության և այլ բարձր հատկանիշների մասին, բայց, իմ կարծիքով, այդ ամենի մեջ Լոռվա բնությունն իր մասն ունի, այն չքնաղ երկիրը, ուր աճել և ձևավորվել է այսօրվա շնորհալի բանաստեղծը»:

Սիլվա Կապուտիկյան. «Իմ աչքի առաջ դու հասունացար, դարձար մանուկների ամենափնտրված բանաստեղծը: Իզուր չէ, որ դու մեծն Թումանյանի հողից ես ծնվել: Քո բնավորության ու բանաստեղծությունների մեջ զգում եմ թումանյանական պարզությունն ու անմիջականությունը: Դու հայ մանկաշխարհի սիրված բանաստեղծն ես, մեր գրականության անխոնջ ու անկեղծ նվիրյալը»:

Համո Սահյան. «Սուրեն Մուրադյանը 7-ից 70 տարեկան ընթերցողների տաղանդավոր բանաստեղծն է»:

Էդուարդաս Մեծելայտիս. «Ինձ համար հետաքրքիր էր ծանոթանալ մի սքանչելի մարդու և բանաստեղծի՝ Սուրեն Մուրադյանի հետ, կարդալ նրա մանկական բանաստեղծությունները, գրուցել մանկական գրականության խնդիրների շուրջ: Իմ կարծիքով, այդպիսին պետք է լինի մանկական գրողը, հայրական բարությամբ, լավատեսությամբ համակված և կենսասիրությամբ լի: Կորնեյ Չուկովսկուց ու նրա բժիշկ Այբոլիտից ինչ-որ բան եմ զգում իմ գործընկեր Սուրեն Մուրադյանի մեջ: Սուրեն Մուրադյանի մանկական բանաստեղծություններն իսկական վարպետի գործեր են»:

Իսաչիկ Դաշտենց. «Սուրեն Մուրադյանը մեր ամենաշնորհալի գրողներից է: Նա աչքի է ընկնում իր բարձր բարոյականությամբ ու վարքով, օրինակելի ընտանիքով»:

Ռուբեն Զարյան. «Եթե մեկը փոքր-ինչ ճանաչում է Սուրեն Մուրադյանին, անպայման կասի, որ նրա գրչի տակից դուրս եկած ամեն մի տող ազնվագույն զգացումների հարազատ արձագանքն է լինելու: Իսկ ով չի ճանաչում անձնապես, բայց նրա չափածո գործերի ուշադիր ընթերցողն է, առանց կասկածելու կասի, որ դրանց հեղինակը շատ բարի սիրտ ունի»:

Գեղամ Սարյան. «Սուրեն Մուրադյանի բանաստեղծությունները հաճույքով են կարդում երեխաները: Նրա մանկական ստեղծագործությունները սիրում են ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների երեխաները»:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՍՏԱԿԱԿԻՑԸ

Հայոց մանկապատանեկան գրականության ոչ շատ ընդարձակ դաշտում իր պայծառ տեղն է հաստատել, ծաղիկներ ու բանաստեղծություններ տնկել, այլ բոյսեր ու պատմվածքներ աճեցրել և ծառերի ու հեքիաթների շիվեր է բազմացրել մեր 90-ամյա Սուրեն Մուրադյանը:

Նրա տարիքի թվից ավելի գրքերը տարածվել են ու հասել բազմազգ ընթերցողների, մանուկ սրտերի:

Ջերմ ալիքները պարուրում են ու ձգում խոսքի մոգական աշխարհը, և շատ երեխաներ, համոզված են, նրա գրվածքների ներգործությամբ են կապվել ընթերցանությանը:

Դասագրքերից ու անթուղոգիաներից Սուրեն Մուրադյանի զվարթ նկարն է նայում մանուկներին, նայում է գրադարանների պատերից ու ազդագրերից և համոզում նրանց, որ գիրքն ամենակարճ ճանապարհն է դեպի երազանքի դղյակը և բարձր նպատակը:

Բազմաթիվ երգերի տեքստերի հեղինակը նույնքան երաժշտական բարի ելևէջներ, թումանյանական, Լոռվա եզերքի ժպիտ է հղում:

Մի անգամ մեր մանկագիրներից մեկի հոբելյանին ասացի՝ մանուկների համար գրելը երկար ապրելու դեղատոմս է: Վկա՝ Սուրեն Մուրադյանը: Նոր գրքերով ու նոր երգերով ուրախացնես, սիրելի՛ ավագ ընկեր ու մանուկների հասակակից:

Էդվարդ ՄիլիՏոնՅԱՆ

ՄԱՆԿԱՆ ՀՈԳՈՎ 90-ԱՄՅԱ ՊԱՊԻԿԸ

Սուրեն Մուրադյանը նշում է 90-ամյա պատկառելի հոբելյանը: Եվ պատահական չէ, որ երբ քրոջս որդին վազում էր մանկապարտեզ, շուրթին նրա բանաստեղծությունն էր «Երկնքից երեք խնձոր ընկավ» գրքից, որը շահել էր «Տարվա լավագույն գիրք» մրցանակը՝ 1972 թվականին:

Սուրեն Մուրադյանի լավագույն բանաստեղծությունները զարդարում են դասագրքերը, մանուկները հեշտորեն անգիր են անում այդ համով-հոտով ոտանավորները: Նրա հետ այցելել ենք բազմաթիվ դպրոցներ և անցկացրել «Մանկական գրականության շաբաթներ»: Ամենուրեք գրողին ընդունել են մեծ ոգևորությամբ, իսկ նրա բարի ժպիտն ու առնչվող խոսքերը արձագանքել են նրանց սրտերում:

«Ծիծեռնակ» ամսագրի էջերը արժանորում են բանաստեղծի կառուցիկ հայերենով գրված ոտանավորները: Մենք միասին հրատարակել ենք մի քանի ժողովածու, որոնցից ուզում են առանձնացնել «Ծաղկամանի գաղտնիքը» պիեսների ժողովածուն, իր յուրօրինակ դրամատիկական գործերով: Վերջին ժողովածուն, որ հրատարակել է «Ծիծեռնակ» հրատարակչությունը, «Մեկ մանկիկ եմ, մեկ պապիկ եմ» գիրքն է, որտեղ ամփոփված են գրողի վերջին տարիների ստեղծագործությունները:

Ինձ հարազատ են նաև Սուրեն Մուրադյանի քնարական բանաստեղծությունները: Իսկ գարունը ինձ համար գալիս է, երբ Սուրեն Մուրադյանը ծնծաղիկների առաջին փնջերը ձեռքին մտնում է «Ծիծեռնակ» ամսագրի խմբագրությունը:

Խոսքս ավարտեմ Սուրեն Մուրադյանի նրբին տողերով.

*Բանաստեղծները չեն ծերանում,
Նրանք ապրում են ամենուրեք,
Մեկ ծնվող մանկան հետ մանկանում,
Մեկ սիրող շրթին դառնում սիրերգ...*

Անուշ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՈՒՆՆԱՆՆԱԿԱՆ ԲԱՅԻԿ ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՓԱՌԱՎՈՐ 90-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

ԻՆՆՍՈՒՆԱՄՅԱ... ՄԱՆՈՒԿԸ

Թանկագին Սուրեն Մուրադյան, տասնամյակների մեր անեղծ բարեկամության, քո անձի և ստեղծագործական բեղուն ճանապարհի հանդեպ խոնարհումով՝ այս բացիկով ինձ թույլ եմ տալիս քեզ դիմել մտերմաբար՝ առանց ապավինելու քաղաքավարության գրված ու չգրված կանոններին:



Հիշո՛ւմ ես, երբ ծնվել էր քո 70-րդ «զավակը», քեզ բնորոշ հումորով կատակեցիր. «Գրքերիս թիվն ու ապրած տարիներս հավասարվեցին, այսպես թե գնա, ինձնից առաջ կանցնեն»: Անցան: Հիմա, երբ հատում ես ինստունի սահմանը, քո գրքերի մեծ ընտանիքն արդեն եզակի հոբելյան է տոնում՝ շուրջ 130, ընդհանրապես բացառիկ երևույթ մեր բազմադարյա գրականության պարագայում: Այնպես որ, «տարիներ, ո՛ր եք սլանում, մի քիչ կամաց գնացեք» քո հորդորը Աստվածն ունկնդրեց, իսկ ահա իրար հաջորդող նորածին գրքերդ առաջ անցան ու, տե՛ս, եկան-անցան ապրած տարիներիդ էլ շատ ու շատ այն կողմ: Եզակի գրողների է, այո՛, հաջողվել, նման «սխարնք»: Քեզ հաջողվեց, սիրելի՛ բարեկամ, և կրկնակի հոբելյանի առիթով չկարողացա անտարբեր մնալ և շնորհավորանքի ու գնահատանքի խոսք չասել այս բացիկով:

Այդ ե՛րբ էր, այն հեռավոր 1953-ին, ծնվեց քո առաջին գիրքը՝ «Առաջին երգը» խորհրդանշական խորագրով՝ հասցեագրված մանուկներին:

Ճակատագրական ընտրություն, որ հետո քեզ համար դարձավ կյանքի գործ, առաքելություն, սրտի ու հոգու անսահման նվիրում երեխաների բարի ու լուսավոր աշխարհին, որի հավատավոր բնակիչն ես արդեն քանի տասնամյակ: Եվ այդ ընթացքում ծնվել են հրաշալի բանաստեղծությունների, չափածո ու արձակ հեքիաթների, պիեսների, հանելուկների, այլ ժանրերի մանկական գրքեր, որոնց զգալի մասը ժամանակ առ ժամանակ նաև թարգմանվել է ռուսերեն, ուկրաիներեն, բելառուսերեն, տաջիկերեն, վրացերեն և ուրիշ լեզուներով՝ ճանաչում ու երևելի մանկագրի փառք բերելով օտար ընթերցողների շրջանում: Մարդկային մնայուն արժեքների, հայրենի եզերքի, մայրենի լեզվի, բնաշխարհի հանդեպ անսահման սիրո, արժանապատվության, աշխատասիրության, բարության, լավ գործերով կյանքում կանաչ հետքեր թողնելու և հրաշալի այլ դասեր են քո մանկաշխարհում ունկնդրել ընթերցողական սերունդները: Դու ուսուցչի հետ Աստծո ամեն օր դասարան են մտել ոչ միայն քո գրքերով, այլև դպրոցական դասագրքերում սփռված ստեղծագործություններով, բեմերից երեխաների շուրթերով հնչող պարզ ու մատչելի բանաստեղծություններով, բեմադրված պիեսներով, քո տեքստերով ծնված բազում երգերով, նաև տասնամյակներ շարունակ դպրոցներում, նախակրթարաններում, գրադարաններում երեխաների հետ ունեցած մշտական հանդիպումներն էլ յուրօրինակ դասեր են եղել նրանց համար: Ու թեև դու տարածանք բազմաթիվ գրքեր ես գրել նաև մեծերի համար, բայց քո գրքերի պատկառելի մասը հասցեագրված է մանուկներին, և բոլոր ժամանակներում քեզ առաջին հերթին մանկագիր են համարել, և ինքդ էլ հպարտությամբ ու սիրով ես կրել, քո խոստովանությամբ, «գրողի համար ամենաբարձր այդ կոչումը»: Դու, թանկագին՝ բարեկամ, հայ մանկական գրականության նորօրյա հրաշալի այգեպանն ես և քո աճեցրած «այգու» բերքը տարիներ շարունակ շրայլորեն բաժանել ես երեխաներին «Այգու բարիքներն անուշ արեք, երգն, աշխատանքը, հողը սիրեք» բարի մաղթանքներով, այսքանից հետո էլ դեռ երազել «հրաշքով կախարդ դառնալ», իրեղեն ձի հեծնել, «Գավազանի մի հարվածով այս աշխարհից վերացնել ամեն չարիք, արարել միայն երգ ու բարիք...»:

Շնորհավորելով քեզ փառավոր հոբելյանի առթիվ՝ այս փոքրիկ բացիկն ուզում եմ ավարտել քո մանուկ ու պատանի ընթերցողների հանդեպ անսահման սիրո ու նվիրումի հուզիչ տողերով՝ հյուսված «Արգաքաղ» ժողովածուում.

*Գարուններս աշուն դարձան՝
Ջուզված ոսկե տերևով,
Տարիներս թռան-անցան
Կռունկների թևերով:
Դուք իմ կյանքի երկար ճամփին
Եղաք երգիս աղբյուր թանկ,
Ես՝ նավարար, իսկ դուք՝ ափին
Լույսի փարոս, կանչող զանգ:
Ձեզնով եմ ես հավերժ ջախել,
Ձեզ համար եմ ապրել ես,
Տխրությունը ինձ եմ պահել,
Խնդրությունս փոխել ձեզ:
Անբաժան են իմ ծիծաղը
Եվ լուսարար իմ երգը,
Իմ ճոխ այգում մրգաբաղ է,
Ձերն է, ձերն է ողջ բերքը:
Ջերմ մաղթանքներով և 100-ամյակիդ սպասումով՝*

Լյուդվիգ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԻ, ՍՈՒՐԵՆ

Սուրեն Մուրադյանը 90 տարեկան է: Նրա անունը վաղուց է ծանոթ ու սիրելի հայ ընթերցողների լայն շրջաններին: Սուրեն Մուրադյանն այն եզակի գրողներից է, ով իր ստեղծագործական ողջ եռանդն ու կարողությունները նվիրել է մանկական գրականության զարգացման գործին:

Բարդ ու հետաքրքիր է մանուկների աշխարհը: Այդ աշխարհը մտնելու, ճանաչելու, մանկան հոգուն ու սրտին մոտ ու հարազատ գործեր ստեղծելու շնորհը տրված է յուրահատուկ տաղանդի տեր մարդկանց, որոնց թվին է պատկանում նաև Սուրեն Մուրադյանը: Սուրեն Մուրադյանը հեղինակ է 130-ից ավելի ժողովածուների, որոնց մեջ ամփոփված են անվանի բանաստեղծի՝ մանուկներին ու պատանիներին հասցեագրված բանաստեղծություններն ու պոեմները, լեզենդներն ու առակները, պատմվածքներն ու պիեսները: Այո՛, սիրելի հոբելյարը բազմաժանր գրող է: Հիշենք նրա «Ծաղկամանի գաղտնիքը» պիեսը, որ բեմադրվել է Երևանի տիկնիկային թատրոնում՝ արժանանալով երեխաների ջերմ ընդունելությանը:

Նշենք նաև, որ Սուրեն Մուրադյանը այն հեղինակներից է, ում գործերը լույս են տեսել նախկին Խորհրդային Միության գրեթե բոլոր հանրապետությունների լեզուներով: Մոսկվայում ռուսերեն տպագրվել են «Փոստատարի երգը», «Նապաստակի մուշտակը», «Հնարամիտ Արտոն», ուկրաիներեն՝ «Եղբայրության ծաղկանոցը» (Կիև), բելառուսերեն՝ «Չորս արև» (Մինսկ), տաջիկերեն՝ «Փոստատարի երգը» (Դուշանբե) ժողովածուները:

Սուրեն Մուրադյանը միշտ ակտիվորեն մասնակցել է ՀԳՄ կազմակերպած գրական-հասարակական միջոցառումներին, գրական մամուլում հաճախակի հանդես եկել բանաստեղծական շարքերով, հրապարակախոսական հոդվածներով: Այժմ, երբ լրացել է մեր հրաշալի ընկերոջ, մեր անվանի բանաստեղծի 90-ամյակը, ես վերհիշում եմ նրա անցած երկարամյա ստեղծագործական ճանապարհը՝ մանկության այն հրաշալի մոլորակը, որտեղ ապրել է նա, հաղորդակցվել մանուկների լուսավոր երազներին, որոնք ոգեշնչել են նրան ստեղծագործելու, միշտ մնալու երիտասարդական ավյունով լի, բարի ու ժպտերես:

Ուզում եմ խոսքս ավարտել իմ ավագ ընկերոջը, բարեկամին՝ Սուրեն Մուրադյանին նվիրված բանաստեղծությամբ, որ կրում է «Նրանց սիրով» խորագիրը:

*Պոեմն ես դու մանուկների
և հայրենի Լոռու,
ճանապարհը հեռուներից
քեզ փարավ շար հեռու...*

*Երգն ու սերը քեզ ուղեկից՝
երկար ճամփա անցար,
հազարավոր հոգիների
բարեկամը դարձար:*

*Պարզ ու զուլալ քո երգերով,
խորհուրդներով վճիպ
շրջեցիր դու բյուր շենքեր,
մարար պալատ, խրճիթ,*

*Որ բոլորի ցավն իմանաս,
խնդրությունը կիսես,
նրանց սիրով հավերժանաս,
նրանց հետ միշտ ապրես...*

Ամուր առողջություն քեզ, սիրելի՛ գրչեղբայր, և նոր գրքեր...

Լիպարիտ ՍԱՐԳՍՅԱՆ

Հ Ա Ր Յ Ա Չ Ր Ո Ւ Յ Յ Ա Ռ Ի Թ Ո Վ Ե Վ Ա Ն Ա Ռ Ի Թ

Կինոյի ոտքի տակ հողը երերուն է



Սամվել Կոսյան - Կրթության տարիներին ուսանողական թատրոնում ներկայացումներ եք բեմադրել՝ «Ծաղրածուն», «Կուպե», «Արեգնազան» և այլն: Թվում է՝ շարունակությունը ոչ թե պատմվածքներն ու սցենարները, այլ դրամատուրգիան պիտի լինե... Ի՞նչն է խանգարել:

Անահիտ ԱՐՓԵՆ - Պատերազմն ու կինոն խանգարեցին: Առաջինի դեպքում պատասխանս կարող է առնվազն տարօրինակ հնչել, քանի որ պատերազմը պետք է որ նպաստեր թատերական բեմադրություններ իրականացնելու իմ պլաններին: Ավելին, ավարտականս ներկայացրի թատերական բեմադրությամբ՝ Լուսաշխի տանը, և ցանկություն հայտնեցի մեկնել ԼՂԻՄ: Դիպլոմը ստանալուց հետո պետք է գնայի Շահումյանի շրջանում աշխատելու, սակայն իմ ու ինձ շատ մերձավոր մարդկանց նպատակները չհամընկան: Նրանք շատ արագ գտան ինձ Արցախ գնալուց ետ պահելու միջոցը, ու ես, մինչև դիպլոմն ու գործուղման թերթիկը կստանայի, հայտնվեցի «Հայֆիլմ» կինոստուդիայի նկարահանող խմբերից մեկում: Գրեթե մեկ տարի աշխատեցի Դիլիջանում: Թե դիպլոմը երբ վերցրի, չեմ էլ հիշում, իսկ գործուղման թերթիկը ոչ էլ ստացա: Իսկ հետո Շահումյան մեկնելն արդեն անհնար էր դարձել, ես էլ խրվել էի կինոյի մեջ: «Հայֆիլմ» գալուս առաջին իսկ օրերին Ալբերտ Յավուրյանը զգուշացրեց, որ ճահիճ է, ես էլ պատասխանեցի, որ արձեռն եկել եմ: Կինոյից հեռու չէի. մանկությունս տարիներին կինոթատրոնից դուրս չէի գալիս, երիտասարդությանս տարիներին՝ թատրոնից: Չգիտեմ, թե ինչը ինչին խանգարեց: Ռեժիսոր դառնալ երազելիս տարված էի թատրոնով, և երբ Սուրեն Հասմիկյանը կինոֆոտո բաժին ընդունվել առաջարկեց, լսել անգամ չուզեցի: Բայց, արի ու տես, Ֆրունզե Դովլաթյանի արվեստանոցում ուսանելը վերջը ինձ տարավ կինո:

Ս.Կ. - Այժմ ոչ միայն սցենարների, այլև ֆիլմերի հեղինակ ու ռեժիսոր եք: Հետաքրքիր է արդի հայ կինոյի Ձեր գնահատականը՝ նախՆՉ, թե՞ արժեքային ձեռքբերումներ:

Ա.Ա. - Ինչպիսին որ Հայաստանում տիրող քաղաքական համակարգն ու սոցիալ-տնտեսական կյանքն են եղել, այնպիսին էլ հայաստանյան մշակույթն էր և է: Կինոն բացառություն չէ: Հայաստանյան կինեմատոգրաֆիան տնայնագործություն է առանց ռազմավարության ու արժեհամակարգի: Սկզբում արտադրության մեջ ռեժիսորի կուլտն էր իշխում, իսկ պրոդյուսերական կինոարտադրությունն իսպառ բացակայում էր, ուստի, չնայած արտադրության աճին, զարգացում չկար: Պրոդյուսերությունը նոր-նոր է ոտքի կանգնում, բայց հիմա էլ ռեժիսորական մտածողության մակարկ կա: Այսօր, մեծամասամբ, ռեժիսորն ու պրոդյուսերը նույն անձն են, և ռեժիսուրան ու կերպարային մտածողությունն ավելի թույլ են, դրամատուրգիան մինչև ֆիլմի ավարտ չի դիմանում և ինչ-որ պահի փլվում է: Պրոֆեսիոնալիզմի բացակայությունն ակնհայտ է:

Շատ ֆիլմեր կան, որ դիտելիս ակամա ասում եմ՝ ախր, այսպես չի՛ կարելի նկարել: Պատճառը թերևս այն է, որ մեր օրերի կինոն նյութականացավ առանց հոգու, և այսօր կինոյում առկա է անանձնական սիրո կործանարար բացակայություն:

ԽՍՀՄ-ում արվեստագետն և կինոարտադրությունը դրվում էին որոշակի շրջանակների մեջ և թույլատրում ազատ ստեղծագործել միայն այդ շրջանակներում, իսկ ստեղծագործությունը բովանդակությամբ պետք է համապատասխաներ առաջադրված ձևին: Խորհրդային պետական քաղաքականությամբ կինոն համարվում էր «արվեստներից ամենակարևորը» և ծառայում էր տիրող համակարգին: Հետխորհրդային տարիների առաջին մեծ դժվարությունները հաղթահարելուց հետո և հնարավորությունների տարեց-տարի ավելացմանը զուգահեռ, թվում է, թե պետք է ավելի լավ արդյունքներ արձանագրվեին, սակայն ձեռքագատվելով պարտադրվող շրջանակներից և խորատուզվելով ամենաթողության մեջ՝ արվեստագետը և կինոարտադրությունը ստեղծագործական ու տնտեսվարման մեկ ծայրահեղությունից ընկան մյուս ծայրահեղության մեջ: Սկսվեց փողի գերիշխանություն՝ և՛ արտադրական, և՛ ստեղծագործական հարցերում: Իրենք գրում, իրենք նկարում էին, ով փող էր ճարում, նա էլ նկարում էր, ինչին փող էին տալիս, այն էլ նկարվում էր, որտեղից փողը ճարվում էր, այդ «ճաշակն» էլ բավարարվում էր: Արդյունքում, կինոյի ռազմավարական, քարոզչական, դիվանագիտական, ազգային, արդյունաբերական և արվեստային դերն ու նշանակությունն անտեսվեցին կամ երկրորդ պլան մղվեցին, բովանդակությունը ստորադասվեց ձևին, առաջ եկավ մակերեսայնություն, և արհեստավարժությունն իր տեղը զիջեց դիվետանտիզմին: Հիմա արտադրությունը զարգացել է, ֆիլմերը շատացել են, ասելիքն է քչացել: Ընդհանուր պատկերը տեղ-տեղ լողացող կղզյակների գործունեություն է, դեռ կինոպրոդյուսերական գործը նոր-նոր է ցրցամ տալիս, թե որ զարգանա, ուստի՝ ոլորտում դեռ կանոնակարգման ընթացքի խառը վիճակ է, և կինեմատոգրաֆիան օրենքի դաշտ բերելու փորձերը դեռ քննարկման ու տարակարծությունների, տարբեր շահերի անհարթություններում են: Հետևաբար կինոյի ոտքի տակ հողը հաճախ է երերում, և կինոարտադրության ու կինոարվեստի զարգացումների միջև առկա է օտարացածություն ու նկատելի անջրպետ: Թեև թևակոխել ենք արտադրության զարգացման միտումների ու սեփական իրավունքների պաշտպանության գործընթացների փուլ, սակայն երբ ետ ենք նայում, հետխորհրդային լավագույն ֆիլմերը առաջին տարիների ամենադժվարին պայմաններում ստեղծվածներն են: Իհարկե, ստեղծագործական նախանջի արձանագրումը բնավ չի նշանակում, թե շնորհալի քանքար չկա՝ չնայած տարիներ շարունակ հեղինակավորների շուրթերից անվերջ լսել ենք, թե մեր կինոն մարում է, հետաքրքիր մտահոգացումներ, սցենարներ, երիտասարդ դեբյուտանտներ չկան: Իրականում այդպես ներկայացվել է՝ ի կոծկումն այն անբարենպաստ պայմանների, որ հենց իրենք՝ ասողներն են միշտ ստեղծել չցանկանալով գործ ունենալ տաղանդավորների հետ, շրջանցելով նրանց սցենարներն ու ֆիլմերը և հնարավորությամբ

յուններ տալով միայն գործարքի մեջ մտնողներին: Դե, իսկ մշակույթի պատասխանատուները երկրի կինոարվեստի և կինոարտադրության հարցերը հիմնականում առաջ են տարել սեփական շահերով: Եվ այսօր ոլորտի բոլոր հարցերը կանոնակարգելու խիստ անհրաժեշտություն կա:

Այսուհանդերձ: Նշենք, որ 1990-ականներից հետո էլ է հայ կինոն լավ ֆիլմեր ստեղծել: Հիշենք մի քանիսը: Դմիտրի Կեսայանց «Աղետ»։ մարգարեական ֆիլմ է, ցավոք չլուսաբանված, գուցե չհասկացված ու անտեսված, պատիվ եմ ունեցել երկրորդ ռեժիսորը լինելու: Առնուկ Աղաբաբով «Որտե՞ղ էիր, մարդ Աստծո»։ վեր է հանում բոլոր ժամանակների կեղծ հեղափոխականների էքսպրոպրիացիոն գործունեության էությունը: Շատ արդիական է նաև հիմա, ինչպես որ շատ արդիական է մեր դասականների հայտնի հերոսը և նրան բավական լուրջ կինեմատոգրաֆիկ ու գաղափարաբանական ինքնատիպ աշխատանքով ներկայացնող Արմեն Ռոնտվի (Մկրտչյան) «Քաջ Նազար» ֆիլմը: Այս տարիներին հիմք է դրվել համատեղ ֆիլմարտադրության, որը կինոարտադրության զարգացման համար կարևոր հանգամանք է, բայց մեզանում հիմնականում գումարներ դեռ հայթայթվում են աջակցող հիմնադրամներից: Ցանկալի է, որ ակտիվանա տարբեր երկրների համատեղ ֆիլմարտադրությունը: Հիշատակենք նաև Անահիտ Աբադի երեք տարի առաջ ստեղծած «Եվա» ֆիլմը, որը հիմնական կինոնկարների հեռուտատեսային մտածողության ու ձևաչափի առատության պայմաններում ակնառու պրոֆեսիոնալ կինոարտադրանք է: Կարեն Մկրտչյանի «Հողս գրկեմ, է, գրկեմ» ֆիլմը սիրտ ու հոգով նկարահանած, հաջող ֆինանսավորված է: Հետաքրքիր է ինքնատիպ են Անդրանիկ Հարությունյանի «Արվեստ հյուրանոց», Արտակ Սարգսյանի՝ մինչև կինոլրություն ստանալը ֆեյլդիական ոգով նկարած, շատ խոստումնալից «Ուղղահայաց» և Ռոման Մուշեղյանի դիպլոմային «Թափորը գնում է դեպի դժոխք» կարճամետրաժները: Լավ ֆիլմեր էլի կան, ես միայն նշեցի հանրությանն առանձնապես ոչ հայտնի մի քանի խաղարկայիններ, որոնք կարելի է համարել արժեքային ձեռքբերումներ: Իսկ ձեռքբերումներն ու նվաճումներն օրինաչափ կարող են դառնալ լուրջ զարգացումների մեկնարկից առնվազն 5 տարի հետո միայն:

Ս.Կ. - Եղե՛լ է, որ սցենարը վերափոխեք պատմվածքի և հակառակը, պատմվածքը՝ սցենարի: Ո՞ր գործողությունն է ավելի հեշտ ու սրտամոտ:

Ա. Ա. - Պատմվածքն ու սցենարը տարբեր ձևաչափի ստեղծագործություններ են, գրվում են տարբեր նպատակներով և տարբեր կիրառություն ունեն: Պատմվածքը ավելի ընդգրկուն տեղեկատվություն ու մանրամասներ է պարունակում, կինոսցենարն ավելի հստակ երկխոսություններ է պահանջում: Երկու առումով էլ պատմվածքը սցենար դարձնելն ինձ ավելի սրտամոտ է («Դիլիջանյան խճանկար», «Աղջիկ, ճայր է և հեռախոս», «Անցած սենտիմենտալ պատմություն»): Իսկ կինոսցենարը գրական գործի վերածելը թեև պակաս ցանկալի գործ է, քանի որ ավելի շատ աշխատանք ու լրացուցիչ տեղեկություն է պահանջում, այնուհանդերձ այս գործի հետաքրքրությունն էլ այն է, որ կարող ես

մտահոգացումն ազատ զարգացնել, երևակայությանը զարկ տալ և նոր հնարքներ ավելացնել:

Լիամետրաժ կինոսցենարներս սովորաբար վերածվում են կինովիպակների: «Խաղալիքների անվերջանալի հեքիաթ» գրքում ունեմ երկու կինովիպակ (պատմական «Ճերմակ նոսրի», մանկապատանեկան «Գետի ափին գրագ չեն գալիս»), երկուսն էլ սկզբում նկարահանվելու համար գրված սցենարներ են եղել, հետո դարձվել են գրական գործեր, որպեսզի հնարավոր լինի հրատարակել: Կինոսցենար կա, որ պատվիրվել է, բայց ինչ-ինչ հանգամանքների պատճառով չի իրականացվել, դարձրել եմ պատմվածք («Փախուստ»), ապա հրատարակել: Կատակերգական կինոսցենար կա, որն ինքս եմ մտահոգացել գրել, բայց ծախսատար է եղել, գումարի բացակայության պատճառով դարձրել եմ թատերախաղ («Շուրջուրդ»): Թատերախաղ կա, որի հիման վրա ֆիլմ նկարահանելու առաջարկություն է եղել, սցենարն էլ եմ ինքս գրել («Գետի ենթական», «Պարտադրված զինադադար») և այլն:

Ս. Կ. - Գրական չափորոշիչների շուրջ բանավեճը չի հանդարտվում և շարունակում է օրափոխվել լինել: Ո՞րն է Ձեր դիրքորոշումը:

Ա. Ա. - Չափորոշիչը չափի զգացումն է, և սա բառախաղ չէ, այլ իմաստային համադրում, և, ինչպես ինձ շատ սիրելի վարոս Հովակիմյանն էր ասում. «Հարկավոր բառը՝ հարկավոր տեղում»: Ո՛չ չափից դուրս ճոխ շալվիղ մակդիրներն ու համեմատություններն են չափորոշիչ, ո՛չ էլ բացահայտ աղքատիկ խոսքն ու երևակայության, սիրտ ու հոգու կամ մտքի վերլուծական կարողության բացակայությունն է ընդունելի: Գրական գործում կարևոր է, որ բառ ու պատկեր, համեմատական վերլուծություն կամ այլաբանություն ու փոխաբերություն ոչ թե ուղղակի գեղեցիկ լինեն, այլ հետաքրքիր պատմություն ու մթնոլորտ ստեղծեն, անկախ ընտրված թեմայից՝ հարց, երևույթ, զգացմունք ու զգացողություն, խնդիր քննեն, որոշակի ասելիք ու ենթատեքստ, հեղինակի տեսակետ ու դիրքորոշում արտահայտեն: Եթե ազատ մտածողությունը չզուգորդվի կողմնորոշված դիրքորոշմամբ, ուրեմն տուրք է տալու պատեհապաշտությանը և ուղղակի հաճոյանալու է ընթերցողին: Եթե գրողի շարադրած գեղեցիկ պատկերը մթնոլորտ չստեղծեց, գրական գործը դատապարտված է անհաջողության: Ասելիք չեղավ, գրվածքին ոչինչ չի փրկի, եթե գրողն ասելիք չունի, չպետք է գրի: Իսկ ասելիքը, ինչ ձևի մեջ էլ եղավ, պետք է լեցուն լինի բովանդակությամբ, հոգու ճիշով և բնության կանչով: Բնություն, այսինքն՝ բնույթ, երևույթ, էություն, տեսակ, հասարակության մասնիկ, մարդ, սոցիումի տարր... Այլապես, կատարյալ տեխնիկական անգամ չափանիշ չէ, եթե արդյունքում լինելու է շինծու գրականություն: Նմանատիպ գրելաճը, հատկապես պոեզիայում ու պոետիկ արձակում, տպավորելու փոխարեն հակառակ ազդեցությունն է թողնում, քանի որ այդպիսի գրողները աշխատում են կաղապարներով, իսկ կաղապարները սպանում են արվեստ, գրականություն, նաև՝ գրականագիտություն: Արձակ և չափածո խոսքի արվեստին տիրապետելուց զատ, ժանրի պահանջները արհեստավարժորեն բավարարելուց բացի,

IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA



«Ներիր ինձ, ՀԱՅՐԵՆԻՔ, նվաստիս անփառունակ ընթացքի համար: Ներիր, որ չկարողացա կերտել հաղթական երթոյ ու ներիր, որ բոլոր վերքերդ չկարողացա առնել մարմնիս վրա, որպէս բազմաչարչար օրերիդ մխիթարանք...»

Ներք ինձ, այսօրվա հրաշք մանուկներ, ներք, որ արյունս բավարար չեղավ փրկել ձեր կյանքերն ու վաղվա սերունդներին: Եվ ներիր ինձ, իմ ԱԶԳ, անվնաս երկիր քեզ չնվիրելու համար...»:

ՎԱԶԱԳԱՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԱՀԻՑ ՅՈՐ ԲՈՊԵ ԱՌԱՋ, ԿԱՍ ՈՒՂԱԿԻ՝ ԳՆՂԱՊԵՏԸ...*

Նրան ոչ ոք չէր նեղացրել...
Մանկության անթիվ հեքիաթային գեղեցիկ գոյներից բացի, ներսում մեծ ցավ ուներ պահած, որն անխնա հոշոտում էր իրեն, իր իսկ ներկայում...
Ջորացրվելուց հետո սիրում էր նայել հրաշք դպրոցականներին, ուսանողներին՝ մտովի հասնելով հուշերի գեղեցիկ ամրոցը...
Աններդաշնակության ծանրությունը կրելով՝ հյուսվում, ինքնազնչանում էր՝ խաղաղության, ներքին կայունության կարոտը սրտում...
Կոամետիկ փոփոխություններով համակված ժամանակը իրեն բոլոր իմաստներով անտեսում էր, քանի որ մշակույթի, ինքնության, գոյության պահպանման բարդ ընթացքում անտեսվեցին սակավաթիվ ճշմարտության ձայները, որոնց երազանքներում ինքնիշխանությունն ու ազգապահպանության իրական պատկերն էր ամփոփված...
- Խաղաղ երկինքն ու մեր ազգային միասնությունը իրար չսփռեցին: Հզորներից յուրաքանչյուրն իր պայքարով փորձում էր փրկել երկիրը՝ մոտեցնելով ազգաբնակչությանը փրկության կայարանին, բայց...
- Բայց նորից քաղաքակիրթ հանրությունն ասում է՝ մենք ճանաչում ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Այսինքն՝ մեր երազանքը Ադրբեջան է, և վերջ...
- Գիտես, Աննա՛, «դեմոկրատական» խաղաղության քարոզի ներքո են պայթում մոլորակակործան ռումբերը՝ իրենց իսկ ուժերով կերտված խաղաղությունը ունահարող պատերազմական իրողություններում:
- Հետո՞...
- Հետո կրկին հաջորդում են հարգարժան պարոնների խաղաղասեր կոչերը, որից անմիջապես հետո գալիս է բազմաթիվ անմեղ մանուկների անմանկության երթը, սովի մատնված հասարակության փրկություն աղերսող ձայները, հողին հավասարեցված, քանդված երկիրն իր ինքնության դիմագիծն արտացոլող պատմամշակութային շինություններով, բազմաթիվ կորուստներով...
- Եվ...
- Եվ կրկին ուրան, էլի ոսկին, նավթը, անմեղ մարդկային կյանքերն ու...
- Յավուտ է...
- Մայրական խնամքով ապրող մանուկը հիմա անտարբերության ճիւղի լաբիրինթոսում քաղցած վազում է Սիրիայի փողոցներով, քանի որ իր խաղաղ երկիրը դարձրին հրեշների թատերաբեմ:
- Ու երազը մտում էր...
- Կար մի ժամանակ, երբ սիրիացին արտասվելու ժամանակ չունեի, քանի որ այդ ծաղկուն երկրում մարդն անելու բան ուներ: Երազանքը մարդուց չէին խլել, երեխաները որբացած չէին, և փողոցները նրանց արյամբ ողողված չէր. ու նորից ԱՐՅԱԽԸ...
- Արցախը...
- Հա՛, Արցախը... քաղաքակիրթ հանրության անտարբերության սառը ժպիտը ճաշակող, արյունաթաթախ երազներով կերտված մեր Արցախը...
- Դժվարին ժամանակներ ենք ապրում:
- Ես կասեի՝ ԱՆՍԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ: Մոլորակում սիրո պակաս կա: Մարդիկ անքնական են ժպտում, քաղաքակրթության ոտքերի տակ գոհելով անկեղծությամբ՝ դառնում են ստապատկերներ...
- Սիրո պակասը զգացվող ժամանակներում ենք...
- Ուր անձնական շահը փշրում է գեղեցիկ երամը մարդկության...
- Կուզեի մեկ օր բոլորս ապրելիք սիրիացի մանուկների պես՝ որբացած, աներազ երկնակամարում, որ լսելի լիներ խլացած ձայնը մեր խղճի...
- Գիտես, առյուծը առյուծ է, անտառի արքան: Նրա մոնչոցից զգաստանում են «օրինազանց» գազանները: Բնությունը անխախտորեն դիմապատկերել է արքա կոչվածին, բայց անգամ արքայի ձագի համար վտանգավոր է միայնակ շրջել ինքնիշխան հոր արքայության տարածքում:
- Գնդապետ Գևորգ Մհերյան...
- Ի՞նչ:
- Կուզեի՝ Գևորգ Մհերյանի նման պետական մտածողությամբ մեկը գնար խոսքեր մեզ դասեր տվող քաղաքակիրթ աշխարհի հետ: Գնար պատմեր հայի վերքերով լի մարմնի պատմությունը...

Իմ ժամանակի հերոսի աչքերում հրաժեշտի պատկերն էր դրոշմված: Մաքրելով մեղքերն ու հարթելով ճանապարհը այս խենթ տիեզերքի հեղինակի հետ՝ նա օտարվում էր ներկայից:
Ջուլավոլ աչքերի ինքնահոս արցունքներում աներազ ներկայից դեպի երկինք գնացող ճանապարհն էր...

Շարունակությունը՝ էջ 8

ԲԱՐԻ ՄՐՏՈՎ ՄԵՐ ՀՍԿԱՆ

Բարձունքը մերն էր, տղերքը պիտի լիեին: Քանի-քանի անգամ ընթերցում եմ որդեկորոյս պոետի, այլևս սգի խարանը կրող, հավերժ մոնչացող Խաչիկ Մանուկյանի բանաստեղծությունը և փլվում եմ: Առավոտյան արթնանում ենք գնացողներին երանի տալով, երեկոյան քնում՝ գերի տղաների համար աղոթքով: Չնայած չենք էլ քնում արդեն: Ազգը չի քնում այլևս: Հայտնի մովսիսիլմի պապիկի պես: Մեր երազը մնաց Շուշիի տակ՝ Քարին տակ կոչվող վայրում:

Վաչագանը իր բոլոր ընկերներին հրաժեշտ էր տվել անբառ, թաքցնելով, որ դա հրաժեշտի հանդիպումն էր: Վաչը իր մարմնով ողջ խրամատի տղաներին ծածկող հսկա էր: Իր երազները միշտ իրենից առաջ էին վազում, իր խոսքն ու գործը միշտ հաղթողի դիրքերից էր: Գիտակցված էր իր անձնազոհությունը: Նա գնաց, երբ երկրորդ անգամ համայն հայությանը զորահավաք հայտարարվեց ի լուր աշխարհի՝ «Ձեր բակի տղաներով ջրկատներ կազմեք» կոչին անսալով: Էլ ո՞վ կարող էր ետ պահել Վաչին: Հզոր պոետի գրով, շնչով, բռունցք խոսքով, պողպատե ոգու դաստիարակությամբ մեծացած տղան արդեն վաղուց հայրենիքի զինվոր էր: Գնաց առանց վարանելու:

Հիմա արդեն հարազատների ու ընկերների մորմոքն ու կարոտը, կիսատ թողած հանդիպումների հոյսը, մեր սրտերի ցաւումն ու մրմուռը պետք է երկինք հղենք: Նույնիսկ երեխաների հետ համընկնում էր իր՝ աշխարհի մաքուր ընկալման եզրը: Երեխաները իր ընկերներն էին, իմ երեխաների մեծ ընկերն էր: Գրիչն էլ էր իր ընկերը: Մաքուր գիրը կամակորոպամբ, բայց արդեն հնազանդվել էր Վաչագան Մանուկյանի ձեռքին: Գիրը պետք է հզորանար ու երկրորդ գիրք դառնար: Բայց գիրքը «գրվեց» Շուշիի տակ, երկնքում ու մեր դառնացած սրտերում: Նայում եմ իր զավակին ազգի գոյամարտին՝ նվիրած պոետի՝ Խաչիկ Մանուկյանի դեմքին և հիշում եմ պոետի մարգարեություն դարձած տողը. «Իմ հայրենիքը ինձ պիտի ուտի...»:

Այսօր դժոխքը դուրս է եկել գետնի տակից ու տարածական է դառնում Հայաստանով, Արցախով, իսկ դրախտը անմահներինն է, ովքեր գիտակցված անցան սուրբ հողի տակ: Ինձ, ձեզ, մեզ՝ բոլորիս Վաչիկներ են պետք, լույսի պես շատ Վաչիկներ: Նրանք գիտեին դեպի Լույս տանող ճանապարհը, նրանք տվեցին մեզ անգին այդ դասը, մտնել է մենք ընդունենք և ուղղենք մեր ազգի ճկված, ցավացած ողնաշարն ու շարունակենք անմահների գործն ու չապրած տարիները:

Արմինե ՔՈԶԱՐՅԱՆ «Արմավ» հրապարակչության տնօրեն

ՊԱՐԶՈՒԹՅԱՆ ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Վաչագան Մանուկյանի առաջին ժողովածուն բավականին խոստումնալից քայլ է: Այստեղ ամփոփված երկերում կարելի է տեսնել մեր ժամանակաշրջանի մարդուն հուզող խնդիրները: Փոքր ծավալի այս երկերում հեղինակն ընդհանրացրել է մեր ժամանակաշրջանի համապատկերը: Այս երկերում չկան արհեստական խճողումներ և ավելորդ ծեփծեփումներ: Դեպքերը, իրադարձությունները ներկայացվում են արտաքին պարզության մեջ: Բայց Վ. Մանուկյանի պարզությունը երբեք չի վերածվում պարզունակության: Այդ պարզությունը դռներ է բացում բովանդակային անընդգրկելի խորությունների առաջ: «Ավելի լավ է՝ գործերիս մեջ սեփական խեղճությունս երևա, քան ուրիշի մեծությունը», ասում է հեղինակը:

Վ. Մանուկյանի երկերի կերպարաշարը ներկայացնում է հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին: Գլխավոր կերպարները ինչ-որ չափով դառնում են հեղինակային գաղափարների արտահայտիչներ: Այսինքն՝ կարող ենք փաստել, որ կերպավորման արվեստին օժանդակում են նաև կենսական ազդակները: Հեղինակի գլխավոր կերպարներն իրենց մեջ են բեկում քաղաքական-հասարակական իրադարձությունները: Այս երկերում մենք տեսնում ենք այդ իրադարձությունների հետևանքները առանձին անհատների վրա, այլ ոչ թե բուն իրադարձությունները: Վ. Մանուկյանի կերպարները երբեք չեն հասնում մերկապարանցության: Արձանագրելով ժամանակաշրջանի խնդիրները՝ նրանք դառնում են նաև երազային կրողներ: Իրականությանը մշտապես հակադրում են իրենց երազները: Այս հանգամանքը խոր քննարկանություն է հաղորդում Վ. Մանուկյանի արձակին: Չորս երկն էլ աչքի են ընկնում քննարկանության արտահայտություններով: Մարդկային կյանքի տարբեր դժվարությունները երբեք չեն պայմանավորում հոռետեսություն: Այս երկերի գլխավոր կերպարները դառնում են հեղինակային լավատեսության կրողները: Նրանք մշտապես պայծառ հայացքով ու խոր հավատով են նայում կյանքին: Կարող ենք փաստել, որ սա ապրեցնող գրականություն է:

Վ. Մանուկյանի արձակը տոգորված է ազգային ճակատագրի մասին մտորումներով: Հեղինակը վիթխարի ընդհանրացումներ է կատարում այս երկերում: «Չատենք իրար» պատմվածքը վերապատկերում է հայ ժողովրդի ազգային ողբերգությունը: Դրա համապատկերում ներկայացվում է պարոն Արամի ընտանիքը: Եղեռնի ցավը և հարվածներ կրած այդ ընտանիքի ապրելու մեծ ցանկությունը: Հեղինակային լավատեսությունը և պայծառ հայացքը արմատավորվել են պարոն Արամի, տիկին Գոհարի, Մարինեի, Կարենի և Սոնայի կերպարներում:

Վաչագան Մանուկյանին բնորոշ է ոչ թե ողբերգականությունը, այլ խոր թախիծը, որի միջից ճառագում է պայծառ լավատեսությունը...

Կարեն ՄԱՆՈՒԿՅԱՆ

IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA IN MEMORIA

Սկզբը էջ 7

ՄԱՀԻՑ ՅՈՐԹ ԲՈՊԵ ԱՌԱՋ, ԿԱՍ ՈՒՂՂԱԿԻ՝ ԳՆՂԱՊԵՏԸ...*

Աստծո ճանապարհը փնտրող, վիրավոր վերքերով այս տղամարդ ազատամարտիկի սիրտը թաթախված էր մշտապես թախծում, ուր անթիվ հարցականներ կային...

- Քրիստոսի կերպարը, հա՛...
- Յուրահատուկ քրիստոնյա չկարծես: Օրս էլ քարոզներով չեմ սկսում, բայց նրան... փորձիր մտածել: Մեզ ներկայացվող պատմության ամենագեղեցիկ արարումն է. Որդին գալիս է մարդացած, գալիս է միայնակ, առանց երկնային բանակների ուղեկցության, գալիս է որպես մարդկության ու տիեզերապետի հաշտության հարատև կամուրջ, գալիս է Հոր կողմից նույն այդ մարդկությանը մատուցվող խաղաղության, մեծ սիրո, նվիրումի, հաշտության ողջակեզ...
- Գնդապետ, աստվածները նույնպես վերանայում են իրենց երբեմնի մոտեցումները, չէ՞...
- Իհա՛րկե: Մարդակործան ջրհեղեղներով երբեք հարցեր չեն լուծվում: Այդպես չի կառուցվի, չի ստեղծվի համերաշխության մթնոլորտ, և հայրը սեր չի դառնա իր զավակի սրտում:
- Հիմնավոր էր:
- Որքան ուզենք, որքան ցանկանանք խաչվող Քրիստոսի օրինակի մեջ գեղեցկություն կգտնենք:

Գնդապետի ջունը կորցրած աչքերն ինձ հուշում էին իր հոգնածության մասին: Որոշեցի թողնել նրան, որ հանգստանա...

Գիշերը մտնում է, իսկ եղանակի մեջ մեծ տխրություն կար: Չէի հասկանում, թե այս ցիկլոնաթափանց եղանակի ծմբեն հիշեցնող անհասկանալի սառնությունն էր իրական, թե՛ ես էի հորինում, նկարում այն իմ մեջ ու անխնա տարածում փողոցներում...

Գնդապետը... Արցախյան գոյամարտից տարիներ անց կորցրեց հղի կնոջը: Հետո ինքն իր մեջ փակված գիտակցված ոչնչացնում էր իրեն: Բժիշկները գիտեին, որ բուժման մասին առհասարակ չէր մտածում...

Երբեմն սկսել էմ ինձ հարցնել՝ մարդը, ո՞վ է այդ մարդը, գրողը տանի, ո՞վ է նա: Գիտնականների, փիլիսոփաների մեկնություններով, վերլուծություններով հանդերձ, կրկին չի ամբողջանում ինքն իր համապատկերում: Անշուշափեղի մթության պես առեղծվածային և լույսի նման պայծառ է նա...

Ի՞նչ է կատարվում ինձ հետ: Մի՞թե գնդապետը ապաշխարության ճանապարհն է: Կրոնական թույլ զգացումներս, երբուն հավատս երբեք թույլ չեն տվել մտածելու Աստծո-Քրիստոսի մասին, բայց հիմա մարդը որքան մերժի Աստվածաշնչյան օրինակներ, մեկ է, չի կարող հերքել գնդապետի նշած կերպարի յուրահատուկ, ինքնատիպ օրինակի գեղեցկությունը...

Սկսել էմ մտածել նաև աշխարհի մեծ խաղացողների իրականությունը ամեն կերպ շրջանցող «քաղաքակիրթ» անտարբերության մասին: Մի՞թե մենք այդ պատճառով պիտի գոհվենք, կորցնենք կամ մշտապես կռվով պահպանել փորձենք հայրենիքը...

Արցախյան գոյապայքարի առյուծն այսօր վիրավոր է: Անհասկանալի, բազմաթիվ հարցեր առաջացնող դիվային խաղից ծնված քառօրյա մի պատերազմ, որտեղ առյուծը մռնչաց, կռվեց, կրկին այրելով իրար ետևից կյանքի կամուրջները բոլոր, բայց այս անգամ իր որդիների սերնդի բանակներն առաջնորդելով:

Ահա, Թալիշում՝ պաշտպանությունն իրականացնելիս, թշնամին հրետակոծում էր տարածքը՝ փորձելով ճեղքել մեր պաշտպանությունն ու առաջ անցնել: Գնդապետին վստահված էր ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր մի ճանապարհ, որտեղ նա կատարեց իրական հրաշք՝ գերազանցելով ինքն իրեն: Գնդապետը ոչ միայն պահպանում է ճանապարհը, այլև իր ենթակա զինվորների մարտական ոգին չզցելու համար՝ վիրավոր, արնաքամ մարմինը թաքցնում է բոլորից...

Գնդապետը ջերմում էր: Սաթիկի հետ միասին փորձեցինք ամեն կերպ հնարավորինս իջեցնել նրա ջերմությունը: Նա համարյա անընդմեջ կրկնում էր. «Սոնա՛, մենք հզոր երկիր ենք ունենալու, իսկ դու այդ հզոր երկրի սուրբ տաճարի աստվածային երգչախմբում կերպես պայծառ շարականները: Քեզ ոչ մի փամփուշտ այլևս չի դիպչի...»:

- Սաթի՛կ, մի՞թե Սոնան նրա մահացած...
- Այո՛, Սոնան նրա կինն էր:
- Մարդու մեջ կարոտի կուտակումները նկատվում են այն ժամանակ, երբ նա շարունակ փնտրում, կանչում է ինչ-որ մեկին կամ երազում է: Երբեմն այդ կարոտը շփոթում ենք թախիծի հետ: Գույները գուցե նման են իրար, բայց նույնը չեն: Ինչպես գրիչն ու վրձինը...
- Հիշողությունները իշխում են ներկան: Միայն ներկայում կարող ենք ճաշակել, զգալ հուշերի պտղի գեղեցիկ համը, քանի որ սերմը երեկ դեռ պտուղ չէր դարձել մեր գիտակցության մեջ...

Աղունի կերպարը կերտող մայրը եթե չլիներ, Հրանտի արձակի շնչառությունը գուցե այսքան բավարար ուժ չունենար՝ դիմակայելու վաղվա իրարամերժ մարտահրավերներին, պահանջումներին...

Օրինակ՝ ինչո՞ւ Մարկեյը հոգնեց իրավագիտությունից ու գնաց դեպի լրագրություն: Իմ և ձեզ համար... հաստատ, միանշանակ, ո՛չ: Նա գնաց իր ներքին խաղաղությունը գտնելու: Հիմա այս գնդապետը մեր աչքի առաջ փորձում է փրկել արնաքամ մարմնի մեջ տանջվող հոգին...

Կյանքում ոչինչ հենց այնպես չի լինում հենց այնպես...

- Իսկ դուք կլինե՞ք ՆՐԱ երկնային բանակի ԱՄԵՆԱՍԻՐԵԼԻ ԳՆՂԱՊԵՏԸ և կապահովեք տիեզերքի խաղաղ ընթացքը: Վստահ եմ, բոլոր անհայտ ու հայտնի ուժերը կզգաստանան Արարչի անպարտ բանակի ներկայությամբ, գնդապետ:
- Աննա՛, ուսումնասիրե՞ք մեր էպոսը կրկին: Այնտեղ ամբողջությամբ արտացոլվում է մեր անխոստում ներկայից ծնված հետևանքները...
- Այսի՞նքն...
- Մենք էպոսի նկատմամբ ուղղակի սիրողական մոտեցում ենք ցուցաբերել միշտ: Հիշեք մի բան. էպոսի մեջ ազգի ողջ ծածկագիրն է դրված: Մարա Մելիքն ու Դավիթը Մեծ Միերի սերմի ծնունդ էին: Մելիքը օրենքով եկավ, որպես իր հոր ավագ որդի, հողերին տեր լինելու:
- Իսկ...
- Լսիր... ես նրան որպես ազգի առաջնորդ տեսնելու ցանկությամբ չեմ ապրել երբեք, բայց սխալը այլ տեղում է...

Ընդունեք թե ոչ, բայց միշտ ավագ որդուն է մնում հոր գահը, ու Միերի անդրանիկը Մելիքն էր...

Սրանով ի՞նչ ենք հասկանում... հասկանում ենք, որ Մելիքները ծնվում են մեր ԳԻՏԱԿՑՎԱԾ կամ գուցե ՉԳԻՏԱԿՑՎԱԾ սխալներից, որոնք հետագայում մեծ խոչընդոտներ են հանդիսանում երկրի զորացման, ազգային անվտանգության համար...

- Գնդապետ, վստահ եմ...
- Եվ հետո, ի՞նչ եղավ հետո...
- Դավիթին խոցեց թունավոր նետով իր իսկ դուստրը: Ինչո՞ւ խոցեց...

Որովհետև Դավիթը, հոր նման թողնելով հրաշք հայրենիքը, գնաց և իր սերմը դրեց օտարության մեջ, որի պտուղը այլևս իրենը չէր:

- Սերմը՝ մեր ազգային սերմը...
- Գնդապետը... իր երազներում Սոնային ամուր գրկած գնդապետը...
- Աննա՛...

- Ոչինչ չի կարող հենց այսպես ավարտվել, Սաթի՛կ: Նա պիտի ծնվի... թող իր հարազատ երկնքում ամրանա, զորացնի վիրավոր մարմնում տառապած անմեղ հոգին, բայց վերադառնա...

- Իսկ ես այսօր հպարտացա քեզով:
- Միշտ տարված եմ եղել Բրեդ Փիթով, որովհետև հայ տղամարդու կերպարը միշտ պատկերացրել եմ բազմաթիվ չհիմնավորված կարծրատիպերով: Երբեք չեմ կարողացել ընկալել նրանց ճիշտ:
- Գիտեմ:
- Բայց եկավ մի գնդապետ և իր անկախական մոնչոցով փոշիացրեց հոլիվուդյան մի ողջ աստղաբույլ:
- Աննա՛, իմ պայծառ գեղեցկուհի, գնդապետի անունը կգրվի հայոց պատմության փառավոր էջերում: Նրա անվամբ փողոցներ կանվանակոչվեն, դպրոցներ կկառուցվեն, լսարաններ կբացվեն, ու դու...

- Կվերադառնա, չէ՞...
- Կվերադառնա...
- Չարենց է կարդում...
- Ի՞նչ...
- Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին,- աշխարհներին, արևներին,-

Հրանման հոգիներին:- Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,- Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ,- Կյանքի՛, մահի՛ այս ամեհի աղջամուղջում՝ Ողջակիզվող հոգիներին - ողջո՞ւյն...

- Աննա՛...
- Չարենցյան այս տողերը...
- Դու...
- Այս տողերը բարձր հնչում են հիմա իմ ներսում, իր ձայնով...
- Նա գալու է...
- Գեղեցիկ են, չէ՞, աստղերը:
- Գեղեցիկ են:
- Կվերադառնա, չէ՞, նորից...
- Կվերադառնա...
- Իր Սոնայի հետ:
- Հա՛, իր Սոնայի հետ:

Վաչագան Մանուկյանի վերջին պատմվածքն է, տպագրվում է հատվածաբար:

Սկզբը էջ 6

գրվածքի գեղարվեստական շապիկի տակ հոգի, կուռ դրամատուրգիա, միս ու արյուն ունեցող գրական մարմին է պետք: Իսկ կատարման «տեխնիկան» կա՛մ բնատուր զգացողությամբ է լինում, կա՛մ ուսումնառությամբ է ձեռք բերվում և փորձառությամբ ու տարիների ընթացքում մշակվում է, հղկվում, բյուրեղանում... Այնքան է բյուրեղանում, որ գրվածքի մեջ բեկվում են ճակատագրեր, կենսագրություններ, հավատամք, սկզբունքների դավանաբանություն, ատելություն և... սեր: Դե իսկ այս ամենը պահանջում են ստեղծագործական անկեղծություն ու ազնվություն: Աշխարհընկալման յուրաքանչյուր ձևի ու բովանդակության մեջ, ժամանակի կամ այդ ժամանա-

Կիևոյի ոտքի տակ հողը երերուն է

Կից դուրս որևէ մարդու կերպար ստեղծելիս ու այդ մարդուն շրջապատող աշխարհի մասին ինքնարտահայտվելիս պետք է ընթերցողին վերաբերվել ազնիվ, իսկ սեփական նկրտումներն ու ձգտումներն արտահայտել անկեղծ: Եվ ամենակարևորը: Ստեղծագործությունը, ընդհանրացման ուժով ու խոսքի մշակույթով, պետք է ունենա բավարար գեղարվեստական մակարդակ:

Ս. Կ. - Երջանկությունն ինչո՞վ է պայմանավորված՝ ցանկության ուժո՞վ, թե՛՛ ճակատագիրն ինչպես կբարեհաճի...

Գրական Թերթ Գլխավոր խմբագիր՝ **Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ**

ԽՄՔԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. **Նորայր Առաջյան, Լիլիթ Արզումանյան, Պետրոս Գեմիրճյան, Անիտա Դուրյանյան, Ազատ Եղիազարյան, Գորգեն Խանջյան, Սամվել Կոսյան, Էդվարդ Մյուսումյան, Հրաչյա Մարիքելյան**

Հրատարակում է «ՀԳՄ ՀԿ «Գրական թերթ» խմբագրություն» ՍՊԸ- ճ: Վկայական՝ 02Ա 051126: Գրանցման թիվ՝ 1175: Ծավալ՝ տպ. 2 մամուլ: Տպաքանակ՝ 1000: Գինը՝ 100 դրամ: Լույս է տեսնում յուրաքանչյուր ուրբաթ: *Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով, չեն գրախոսվում և չեն վերադարձվում: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների արտահայտած տեսակետներին: Արտասպառնական դեպքում հորմը «Գրական թերթին» պարտադիր է: Թերթը տպագրվում է պետական մասնակի աջակցությամբ: Տպագրությունն իրականացրել է «Լան ԱՐՅԱՆ» ՍՊԸ- ճ՝ ՀԳՄ «Լ. Չ. ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը:*

0019 Երևան 19, Մարշալ Բաղրամյան պող. 3, էլ. փոստ՝ grakan-tert@yandex.ru, grakantert@gmail.com